

ԵԳ. ԶՈՒՄԱՆ



Դարձե
ՍԵՎԱԿ

ՊՈԼԻԳՐԱՖ ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ № 1 ՏՊԱՐԱՆ
(Երևան, Ալավերդյան փող. № 65)
Գրքի մեջ թերություն հայտնաբերելու դեպ-
ֆում խնդրվում է գիրքը այս թերթիկի հետ
միասին վերադառնել տպարանին, փոխա-
րենը ստանալ նոր:



Dr. Richard Pfeifer

ԷԴ. ԶՐԱՄԵՑԱՆ

Հոգինե ՍԵՎԱԿ

Սպիտագործության
համառոր ակնարկ

“ՄԻՏՔ” ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ • 1965

**ДЖРБАШЯН
ЭДУАРД МКРТЫЧЕВИЧ
РУБЕН СЕВАК**
(Краткий очерк творчества)
(На армянском языке)
Издательство „Митк“
Ереван –1965

1

Ռուբեն Սևակը մեկն էր արևմտահայ բանաստեղծների այն սերնդից, որի գրական արշալույսը շլացնելու աստիճան վառ էր, շքեղ ու խոստումնալից, իսկ վերջալույսը՝ անգթորեն կանխահաս, դաժան ու կակծալիւ Մեր դարի սկզբին էր, երբ գրականության մեջ մուտք գործեց բանաստեղծների այդ սերունդը։ Նախ Սիամանթոն՝ հայրենիքի տառապանքից ու կարոտից վիրավոր ձայնով, երևակայությունը ցնցող հախուտն, ուրվային պատկերներով, օրհներգող և անիծող մարգարերանաստեղծի վսեմ կերպարանքով։ Մի քանի տարի անց երևան եկան նոր անուններ։ Միսաք Մեծարենցն իսկույն գրավեց ընթերցողին բանաստեղծական խոսքի նրբության ու գեղեցկության շողշողուն փայլատակումներով, բնության և մարդու մասին քնարական խոհերի զարմանալի խորությամբ։ Դանիել Վարուժանը հրապարակ իշավ կրքոտ ու հզոր ձայնով, անցյալն ու ներկան քննախուզող խորաթափանց բանաստեղծական հայցքով, ողբերգական և հերոսական կերպարնե-

րով։ Ռուբեն Սևակն իր հետ բերեց աղքային և
համամարդկային կյանքի ամենասուր խնդիրների
համարձակ հարցադրումներ, սիրո և բնության
մերթ մեղմ, մերթ առնական երգեր։ Կային նրանց
հետ միաժամանակ կամ ավելի վաղ հանդես ե-
կած և ուրիշ բանաստեղծներ, որոնց թվում այն-
պիսի տաղանդավոր անուններ, ինչպես Վահան
Թեքեյանը, Ռուբեն Որբերյանը, Սիպիլը։ Բայց
սխալված շենք լինի, եթե ասենք, որ 1905—
1915 թթ. արևմտահայ պոելիայի զարգացումն
առավել ուժգնությամբ ու փայլով արտահայտվեց
առաջին շրու բանաստեղծների երկերում։ Եվ դա
չնայած այն դժբախտ հանգամանքին, որ նրանք
բոլորն էլ չհասցրին լրիվ դրսեորել իրենց տա-
ղանդը։ Առաջինը դաժան հիվանդությամբ կյան-
քից հեռացավ Մեծարենցը՝ դեռ հազիվ պատանի
հասակում, «դեռ չողջունած երազներու ջինջ առ-
տուն»։ Մի քանի տարի անց իրենց հարազատ ժո-
ղովրդի և գրչակից ընկերների ողբերգական ճա-
կատագիրը բաժանեցին Սիամանթոն, Վարուժանը,
Սևակը, դառնալով մարդկության պատմության
ամենավայրագ, հրեշտավոր եղեռնագործություն-
ներից մեկի զոհը։ Այսպես, արյունոտ վերջակե-
տով փակվեց հայ գրականության, հատկապես
պոեզիայի պատմության ամենափայլուն էջերից
մեկը։

Դարասկզբի արևմտահայ բանաստեղծության
այդ վառ համաստեղության մեջ Ռուբեն Սևակը

թերևս ամենից քիչ գնահատված և ուսումնասիրված դեմքն է։ Նրա գրական ժառանգությունը, որը բավական հարուստ է ու բազմազան, մինչև այժմ լրիվ չի հավաքվել։ Կենդանության ժամանակ Սևակը հրապարակել է ընդամենը մեկ ժողովածու՝ «Կարմիր գիրքը»¹։ Արտասահմանում ետմահու լույս տեսած ժողովածուները² և 1955 թ. Հայաստանում հրատարակված «Երկեր»³ գիրքը (որը համեմատաբար ամենից լրիվն է) հեռու են լիակատար լինելուց։ Նրանցից դուրս են մնացել ժամանակին մամուլում տպագրված բազմաթիվ բանաստեղծություններ, պատմվածքներ, նամակներ։ Մինչև այժմ անտիպ են մնում Սևակի մի քանի տասնյակ ավարտուն և թերամշակ բանաստեղծություններ, որոնց մի մասը պահպամ է Հայաստանի Գրականության և արվեստի թանգարանում,

¹ Ռ. Սևակ. Կարմիր գիրքը, Կ. Պոլիս, 1910, 71 էջ։

² Տոքք. Ռուբեն Զիլինկիրյան (Ռ. Սևակ). Բժիշկին գիրքն փրցված էջեր, Սելանիկ, 1925, 125 էջ։

Ռուբեն Սևակ (տոքք. Ռ. Զիլինկիրյան). Բժիշկին գիրքն փրցված էջեր, Երուսաղեմ, 1943, 191 էջ։

Ռուբեն Սևակ (Ռ. Զիլինկիրյան). Բժիշկին գիրքն Փըրցված էջեր և քերթվածներ, Փարիզ, 1946, 239 էջ։

Ռուբեն Սևակ. Քերթվածների հավաքածո, Երուսաղեմ, 1945 (այս գիրքը մեր ձեռքի տակ չի եղել.—Էղ. Զ.)։

³ Ռուբեն Սևակ. Երկեր, Հայպետհրատ, 1955. Տեքստե պատրաստումը և ծանոթագրությունները Ե. Պետրոսյան։ Մեջբերուամները կատարում ենք այս հրատարակությունից։ Սևակի այլ ժողովածուներից, պարբերական մամուլից և արխիվից կատարվող մեջբերուամները կնշվեն տողատակում։

իսկ մյուսներն, ըստ երևույթին, գտնվում են արտասահմանում։

Ռուբեն Սևակի ժառանգությունն ըստ արժանվույն գնահատելու գործին, թերևս, խանգարել է նաև համեմատությունների այն եղանակը, որ երբեմն կիրառվել է նրա մասին խոսելիս, հատկապես սիյուռքահայ մամուլում լույս տեսած հոդվածների մեջ։ Սևակը հաճախ է համեմատվել իր սերնդի մյուս բանաստեղծների հետ և նշվել է, օրինակ, որ նրա գործերը չունեն Մեծարենցի բանաստեղծությունների նրբությունը, Սիամանթոյի երկերի թափը կամ Վարուժանի կերտած պատկերների վիթխարի ուժը։ Չենք ասի, թե այս բնորոշումներն առհասարակ սխալ են, սակայն ճիշտ չեր լինի գրողին գնահատել ըստ այն բանի, թե ինչ չունի նա մյուսների համեմատությամբ։ Լավ է ասված. բանաստեղծները հետաքրքիր են ոչ թե նրանով, ինչով նրանք նմանվում են իրար, այլ նրանով, ինչով տարբերվում են իրարից։ Իսկ Ռուբեն Սևակի, իբրև ճշմարիտ բանաստեղծի, ժառանգության մեջ շատ կողմեր կան, որոնք նրա ինքնատիպ տաղանդի արտահայտությունն են և որոշակի գրական-պատմական ու գեղագիտական հետաքրքրություն են ներկայացնում։

Ռուբեն Սևակի կարճատե կյանքը մի ազնիվ նվիրաբերում էր հարազատ ժողովրդին և հայրենի գրականությանը։ Պոեզիան նրա համար օդի պես անհրաժեշտ մի բան էր՝ ոգեշունչ աշխա-

տանքի, տքնության, լուսավոր տրտմության ու երջանկության աղբյուր: 1908 թ. գրած մի նամակում նա հեռավոր Շվեյցարիայից հաղորդում էր.

«Ինձ համար գրելը երգել է. բոլոր մխիթարությունս սա երկաթի փոքրիկ գրիշիս մեջ է. ու մենավոր ապաստանիս մեջ՝ ձմոան գիշերներ՝ ինձմե երջանիկ մարդ չէ կարելի երևակայել՝ ոտանավորի մը ավարտումեն վերջ»¹:

Վաղ ընկավ «Երկաթի փոքրիկ գրիշը» բանաստեղծի ձեռքից, անկատար մնացին շատ գեղեցիկ ծրագրեր ու նպատակներ: Բայց այն թանկագին էջերը, որ թողել է Ռուբեն Սևակը, շարունակում են հուզել և այսօր՝ բանաստեղծի նահատակությունից կես դար հետո:

¹ Գրականության և արվեստի թանգարան (Հետագայում՝ ԳԱԹ), Ռուբեն Սևակի ֆոնդ:

2

Մարմարի ծովի եվրոպական ափին, Կոստանդնուպոլսին մոտ գտնվող մի հայկական գյուղում (*Սիլիվրի*) 1885 թ. փետրվարի 15 (27)-ին ծնվեց ապագա բանաստեղծ Ռուբեն Զիլինկիրյանը: Նրա հայրը՝ Հովհաննես աղան, որը նախ երկաթագործ էր, իսկ հետո զբաղվում էր երկաթեղենի առևտրով, համեմատաբար բարեկեցիկ վիճակուներ և պայմաններ ստեղծեց որդու կրթության համար: Ռուբենը նախ հաճախում է հայրենի գյուղի Ասքանաղյան վարժարանը և ապա Պարտիզակի գիշերօթիկ դպրոցը: Նրա վրա ուժեղ տրապավորություն է թողնում մեծ քաղաքի այդ ծովափնյա արվարձանների գեղեցիկ ու փարթամբ բնությունը, որը մի փոքր անց պետք է արտացոլվեր նրա քնարական բանաստեղծություններում: 1901—1905 թթ. նա սովորում է Պոլսի հայկական լավագույն դպրոցներից մեկում, որի ուսուցչապետն էր հայտնի գրագետ և մանկավարժ Ռեթեոս Պերպերյանը: Հենց այդ տարիներին էլ պատանու մեջ արթնանում են գրական հակումները,

նա գրում է իր առաջին բանաստեղծությունները։ Դրանցից մեկը՝ «Բաժանման խոսքեր» վերնադրով, Ռուբենն ընթերցում է դպրոցի ավարտական հանդեսին։ Բանաստեղծությունը, որը նվիրված էր հարազատ դպրոցից և ուսուցիչներից հեռացող պատանու մտորումներին ու հույզերին, «ընդհանուր գնահատման արժանացավ» և «իբրեւ երախայրիքը ապագա խոստացող երիտասարդի մը» տպագրվեց «Մասիսի» 1905 թ. համարներից մեկում։

Հրաժեշտ, հրաժեշտ... հրաժեշտ հարկիս հավիտյան...
Սիրո զերմ բույն՝ ուր մենք թունիկ երդեցիկ՝
Մեր մայր թունեն առինք զամբերն գիտության...¹

Սակայն Սևակի գրական համբավն սկսեց տարածվել երկու-երեք տարի անց, երբ նա արդեն գտնվում էր Պոլսից շատ հեռու։

Դպրոցն ավարտելուց անմիջապես հետո, 1905 թ. նա իր ուսուցչի՝ Ռ. Պերպերյանի խորհըրդով և աջակցությամբ մեկնում է Շվեյցարիայի Լոգան քաղաքը՝ բժշկություն ուսանելու։ Լոգանի համալսարանում Ռուբենը մի քանի տարի նվիրվում է ընտրած մասնագիտությանը, ամբողջ ժամանակն անցկացնելով պարապմունքների և աշխատանքի մեջ։ Բարեկամներին գրած նամակներից մեկում (1908 թ. հունիսի 22-ին) նա այսպես

¹ «Մասիս», Կ. Պոլիս, 1905, № 24, էջ 379։

է բնութագրում իր զբաղմունքները. «Առավոտեն մինչև իրիկուն գրքերու, դեղերու և հիվանդներու մեջ կանցնի կյանքս... Գրելով չի բացատրվիր,— շարունակում է բանաստեղծը,— աշխատութենե, տքնութենե, խենթութենե, զվարթութենե, մտմը-տուքե շինված այն տարօրինակ խառնուրդը, որ ուսանողի կյանք կը կոչվի»¹:

Բարեբախտաբար, ուսանողի և ապա բժշկի լարված զբաղմունքները Սևակին չկտրեցին գրական աշխատանքից: Լողանում անցկացրած տարիները (1905—1914) եղան միաժամանակ գրական բեղմնավոր գործունեության տարիներ. Նա զարմանալիորեն զուղակցում է բժշկական գործնական աշխատանքն ու բանաստեղծական անկեղծ ներշնչումները: Լողանից Սևակն ակտիվորեն աշխատակցում է արևմտահայ բազմաթիվ պարբերականների («Մասիս», «Արևելյան մամուլ», «Լույս», «Ամենուն տարեցույցը», «Ազդակ», «Ազատամարտ», «Շանթ», «Հայ գրականություն» և այլն), իսկ 1908 թ. ամառ, սահմանադրության հոչակումից անմիջապես հետո արձակուրդով ժամանելով Պոլիս, նա մի կարճ ժամանակ վարում է «Սուրհանդակ» թերթի խմբագրությունը: Լողանում նա գործուն մասնակցություն է ունեցել հայ ուսանողների միությանը:

Ռ. Սևակի, իբրև մարդու և բանաստեղծի, բնո-

¹ ԳԱԹ, Ռ. Սևակի ֆոնդ:

բոշ գծերից են եղել աշխատասիրությունը, նպատակի միասնությունը, պայքարի կամքը։ Այս խորհուրդները, որ նա տալիս է իր մի ընկերոջը հեռվից գրած նամակում (1906 թ. ապրիլի 21-ին), անպայման արտահայտում են հենց իր՝ Ռ. Սևակի բնավորությունն ու ըմբռնումները կյանքի մասին. «Որոշե՛, պայքարե՛, կամքո՛վ և հավատքո՛վ հառաջ մղե՛ նպատակդ, ու հաջողությունը պիտի հասնի քեզի... Կամք ու պայքար. ասոնք են հաջողության ծնողքները»¹։

1911 թ. ավարտելով բժշկութագործությունը, Սևակը շարունակում է ապրել Լոգանում, աշխատելով տեղի հիվանդանոցում իբրև բժիշկ, խորանալով ընտրած մասնագիտության մեջ։ Այդ տարիների նրա անձնական կյանքի մասին ժամանակակիցներից մեկը հիշում է. «1910—1911 թվականներին էր, որ Ռուբենը, սիրահարվելով մի գերմանացի օրիորդի՝ ամուսնացավ և ընտանեկան չերմ օջախ կազմեց։ Սևակն արտաքինով գեղեցիկ ու հետաքրքրական երիտասարդ էր. միջահասակ, սև մազերով ու սև հոնքերով, թուխ դեմքով և գրավիչ աշքերով, որոնք իսկույն ուշադրություն էին գրավում։ Շուտով երկու զավակների հայր եղավ, մի տղա և մի աղջիկ։ Գերմանուհի կինը շատ էր սիրում Սևակին և սկսել էր ամուսնուց հայերենի դասեր առնել։ Ես հաճախ էի այցելում նրանց և

1 ԳԱԹ, Ռ. Սևակի ֆոնդ:

ղարմանում էի, թե ինչպես այդ օտարութին հետաքրքրվում էր հայկական մշակույթով»¹:

Դատելով պահպանված նամակներից ու ժամանակակիցների հուշերից, Սևակը մի քանի անգամ դուրս է եկել Շվեյցարիայից, այցելել հարեվան երկրները, եղել է Վենետիկում և Միջերկրականի ափերին:

Երկարատև ծանոթությունը եվրոպական իրականության հետ նրան հնարավորություն տվեց ավելի խոր ճանաչելու ժամանակակից հասարակության դեմքը, սոցիալական բնեոների հակառությունն ու պայքարը: Նա շշլացավ օտար հորիզոնների խաբուսիկ փայլով, հստակորեն տեսավ «քաղաքակրթության» շղարշի տակ թաքնված կեղծիքն ու անարդարությունները: Նրա հոգին մի բուռն մղումով ձգտում էր դեպի ժողովրդական կյանքի պարզ ձևերը, դեպի գյուղական ազնիվ աշխատանքի ու հույզերի աշխարհը: Այդ ժամանակվա նրա տրամադրությունների մասին վառ պատկերացում է տալիս Լողանից 1912 թ. ապրիլի 29-ին բանաստեղծ Հրանտ Նազարյանին գրած նամակը, ուր նա, ի միջի այլոց, ասում է.

«Եթե բժիշկ եղած շըլլայի, ամենամեծ փափագը էր երկրագործ ըլլալ. ու նույնիսկ դեռ հիմա ամենավերջին փափագս է օր մը կարենալ գյուղ քաշվիլ ու կյանքիս վերջին տարիները դաշտերուս

¹Գ. Ամատյան. Հուշեր նահատակների մասին, «Սովորական գրականություն», 1965, № 4, էջ 81:

ու հողերուս վրա անցընել լոռության ու բնության մեջ: Եկուր տե՛ս որ երիտասարդները չեն հասկընար այս բաները. Եվրոպա նետվիլ կ'ուզեն իսկույն, մինչդեռ Հոն Դ տարի ապրող մը միայն կրնա գիտնալ թե ի՞նչ է քաղաքակրթությունը. «զարգացած կյանքը». ամեն բան սուտ ու կեղծիք շպար ու ամոթ: Ասիկա իմ համոզումս է»¹:

Բանաստեղծին ոչ մի ուրախալի բան չէր խոստանում նաև Պոլսի կյանքը, ուր վաղ թե ուշ պիտի վերադառնար նա: Սևակը լավ գիտեր թուրքական բռնապետության զարհուրելի բարքերը և մի մարգարեական կանխազգացմամբ նույն նամակում գրում էր.

«...Ու այս բոլորին վրա ավելցո՞ւր նաև Պոլսու մղձավանջը. այն հորիզոնը որ քանի մը տարիեն իմի՞նս պիտի ըլլա, և ուր հեռվեն կը տեսնեմ արդեն Սոդոմի մուխն ու Գոմորի մեղքին բոցը»²:

Բայց ինչ էլ լիներ, Սևակը վերադառնալու էր հայրենիք, որովհետև հարազատ ժողովրդի ճակատագրով տրոփող նրա սիրտը չէր կարող հանգիստ լինել հեռավոր, թեկուզ և խաղաղավետ ափերում: Եվ ահա 1914 թ., առաջին համաշխարհային պատերազմի բռնկումից քիչ առաջ³, Սևա-

1 Թեօդիկ. Ամենուն տարեցույցը, 1928, էջ 368:

2 Նույն տեղում, էջ 369:

3 1914 թ. մարտին, դատելով Սիամանթոյին Սևակի գրած մի նամակից, նրանք երկուան էլ դեռ գտնվում էին կողանում (տե՛ս ԳԱԹ, Ռ. Սևակի ֆոնդ):

կը, շնայած ապագայի ոչ-բարի սպասումներին, շնայած կնոջ հորդորներին, վերադառնում է թուրքիայի մայրաքաղաք, ուր իշխանության գլուխ անցած «երիտասարդ թուրքերն» արդեն որոճում էին հայ ժողովրդի լրիվ բնաջնջման հրեշավոր ծրագրերը։ Բանաստեղծը կարծեք ակամայից ընդառաջ էր գալիս մահվան...

3

Թեոդիկի 1911 թ. «Ամենուն տարեցույցի» մեջ զետեղված է Ռուբեն Սևակի կենսագրությունը, որն անկասկած գրված է բանաստեղծի հաղորդած տվյալների հիման վրա։ Այդ կենսագրության մեջ, ի դեպ, ասված է, որ բացի 1910 թ. սեպտեմբերին լույս ընծայված «Կարմիր գիրքը» խորագրով բանաստեղծական ժողովածուից, Սևակը պատրաստում է հրատարակելու ևս երեք ժողովածու՝ «Քառորդ», «Սիրո գիրքը» և «Վերջին հայերը»¹։

Այս վերնագրերի վրա գրականագիտության մեջ ուշադրություն չեն դարձրել, այնինչ դրանք կարեվոր են Սևակի ստեղծագործական հետաքրքրությունները հասկանալու համար։ Թեև 1911 թ. հետո բանաստեղծը դեռ մի քանի տարի ապրեց, բայց ծրագրված ժողովածուներից ոչ մեկը լույս չտեսավ. «Կարմիր գիրքը» մնաց կենդանության ժամանակ Սևակի հրատարակած միակ բանաստեղծական հավաքածուն։ Սակայն պետք է կար-

¹ Թեոդիկ. Ամենուն տարեցույցը, 1911, էջ 284։

ծել, որ նշված երեք գրքերը հիմնականում գրված են եղել¹: Բերված վերնագրերն արտահայտում են Սևակի պոեզիայի երեք առավել բնորոշ ուղղությունները: «Սիրո գիրքը» պետք է սլարունակեր սիրային և առհասարակ «անձնական» թեմաներով գրված բազմաթիվ տպագիր ու անտիպ բանաստեղծությունները: «Վերջին հայերը» վերնագրի տակ, ամենայն հավանականությամբ, պետք է ամփոփվեին Սևակի հայրենասիրական մեծ ու փոքր բանաստեղծական գործերը, հարավատ ժողովրդի ներկայի և ապագայի մտսին արվեստագետի մտորումները: Ինչ վերաբերում է «Քառսը» վերտառությանը, ապա, մեր կարծիքով, այդ ընդհանուր լերնագրով պետք է ներկայացվեին ժամանակակից մարդկության ճակատագրի, սոցիալական ոլայքարի թեմաներով գրված բանաստեղծություններն ու պոեմները: Շիրվանդադեական վերնագիրը, հավանաբար, Սևակի մոտ և արտահայտում էր ժամանակակից բուրժուական հասարակության, իբրև բոլոր սրբազն մարդկային կապերն ու բարձր ըմբռնումները խորտակող մի քառսային իրականության, հիմնական գնա-

¹ Ժամանակակիցներից Մերուժան Պարսամյանը իր հուշերում նույնիսկ գրում է, որ այդ գրքերը կազմված-պատրաստ են եղել. «Ինչ գուրգուրանքով ցույց կուտար իր անտիպ երկերը. Քառսը, Սիրո գիրքը, Վերջին հայերը, Բժիշկին գիրքեն փրցված էջերը» («Ծանթ», Կ. Պոլիս, 1918, 23 նոյեմբերի, № 2, էջ 18).

բայտ հետեւ...

Քիզոց, շատ ու լավ ա-սպառ
Եղիկ ու Շն օփ-ի և արք,
Կայունած ի-շատ ինչ է ԱՅ
Աղջու և ԱՅ ու Տայուն սիրու...

Մի չի ի և լար թաթե,
Շն քայլը ու իտու առ, Շն
Խոյ ու անցոյ խոյ ու անցոյ
Կայունած ԱՅ, ԱՅ ընթու,

Աղջուն համար, Վայդ, Շն,
Տայ անձի, անձարի անձի Դե...
Եղիկ Եղիկ օփ-ի սիրու,

Մի շատ ու անցոյ ու իտու
Կայ անձի, իտու շն, իտու ...
- իտու, իտու, իտու ... առ յացու ...

(Ընդ)

Հեղիկ

Առաքեն Սևակի «Ինչպես երեմն...» բանաստեղծության
ինֆնազիրը:

Հատականը։ Այսպես, մենք ըստ էության գործ ունենք մի յուրօրինակ բանաստեղծական «եռերգության» հետ, որի մասերն արտահայտում էին պոետի գեղարվեստական հետաքրքրությունների երեք հիմնական ուղղությունները («Ամենուն տարեցույցի» մեջ տպագրված նույն կենսագրականի խոսքերով ասած՝ Մարդկությունը, Հայրենիքն ու Սերը), դիտված նրանց ներքին միասնության մեջ։ Բանաստեղծն անձնականից գնում էր դեպի ազգայինը, իսկ սրանից էլ՝ դեպի համամարդկային հարցերի արծարծում։ Ինքնին այս ծրագիրը խոսում է Սևակի բանաստեղծական մտահորիզոնի լայնության մասին։

Սկսենք «Սիրո գրքից»։ Այս ընդհանուր վերնագրի տակ Ռ. Սևակը մամուլում հրապարակում էր բանաստեղծություններ, որոնք ոչ միայն ուղղակիորեն նվիրված էին սիրո զգացման տարբեր արտահայտություններին, այլև բնության տեսարաններին, նրանցով հիացող մարդու հույզերին, կյանքի ու մահվան, մարդու և բնության փոխհարաբերության հարցերին։ Սերը, շատ ուրիշ բանաստեղծների նման, Սևակն էլ հասկանում է լայն, որպես սեր դեպի մարդն ու կյանքը առհասարակ։ Բանաստեղծն անհուն խանդաղատանքով է լցված դեպի կյանքի ու գոյության խորհուրդը։ Այդ մասին խոսվում է Սևակի շատ բանաստեղծություններում, բայց թերևս ամենից ազդեցիկ ու պատկերավոր կերպով՝ «Գիշերն իշավ» երգում

(1914), որը նրա վերջին գործերից մեկը եղավ։
Բացառիկ միասնական է այս բանաստեղծությունը, նրա մեջ միաձուլվում են բնանկարը, զգացմունքն ու երազանքը. այն թվում է մարդկացին մեկ շնչի, կյանքով և բնությամբ զմայլված հոգու մեկ պահի արտահայտություն։ Այս այդ բանաստեղծությունն ամբողջությամբ.

Գիշերն իշավ անամպ, անհուն,
Բյուր բյուրեղե ի՞նչ նուրբ անուն
Տալ անուրջի այս սուրբ պահուն.
— Ա՞խ, ապրելո՛ւ երջանկություն...

Կանէանա նավն հեռակա,
Լիճն երազ մ' է, կա ու շըկա.
Զուրի շշունջն է լոկ վըկա.
— Շշնչելո՛ւ երջանկություն...

Վերն հազար աստղ, վարն հազար լույս,
Կիսաստվերին մեջ հոգեհույզ
Կը խոսակցին քար, վըտակ, բույս.
— Ա՞խ, իրերո՛ւ երջանկություն...

Ու կը ձայնե մատուռն հստակ.
— Սա ծերունի ծառերուն տակ,
Այս քաղցրության մեջ բովանդակ
Քարանալո՛ւ երջանկություն...

Արտաքուստ զուսպ, բայց ներքնապես շատ
հարուստ զգացմունքային բովանդակություն ունի
այս երգը, այն լեցուն է ապրելու, շնչելու, նույ..
նիսկ մեկ հատիկ բառ շշնջալու անպատմելի եր-
ջանկությամբ։ Այդ ամենը պոետին անսպառ
զմայլանք է պատճառում, որովհետև նա արտա-

կարգ նրբությամբ և խորությամբ է ընկալում բնության ամեն մի գեղեցկություն, ամեն մի ձայն ու շարժում: Նա մի ներքին անբացատրելի զգացողությամբ հասկանում է բնության ամենասովորական իրերի, նույնիսկ անխոս քարի, փոքրիկ ծաղկի կամ ջրի մեղմ ծփանքի ներքին իմաստը, նրանց կապը գոյության անհուն խորհրդի հետ: Այդ պատճառով նա նույնիսկ բնության մեջ քարանալը երջանկություն է համարում. չէ՞ որ այդ ճանապարհով կարելի է ձուլվել բնության «բովանդակ քաղցրությանը»:

Ռուբեն Սևակն ունի նաև բնության մասին պատմող շատ ուրիշ բանաստեղծություններ: Ահա, օրինակ, «Լեմանը», «Կարապները»՝ ներշնչված շվեյցարական տեսարաններով: Բնության խաղաղ, լոին ու ներդաշնակ պահերն են գրավում այստեղ բանաստեղծի ուշադրությունը. կապուտակ լճեր, որոնք ալիքվում են մեղմ զեփյուռի հպումից, գիշերվա մեջ խորհրդավոր ստվերներ և ջրերի վրա անաղմուկ լողացող ճերմակ, երազային կարապներ...

Բնության տեսարանը մարդկային որևէ հոգեվիճակի հետ առնչելու ձգուումը Սևակի բանաստեղծություններում հաճախ կարելի է նկատել: Գարնանային բնության երփներանգ ծաղիկների մեջ հանդիսած հիվանդ տերևը բանաստեղծի համար մի պատկեր-խորհրդանիշ է, որը հիշեցնում է սեփական հոգու անժամանակ մարած լույսերը

(«Հոգիս»)¹, իսկ հավերժ կյանքով խոխոջող վտակըն ստիպում է ցավով հակադրելու բնության անմահությունն ու մարդու վաղանցիկ կյանքը («Երնե՛կ, զո՞ւր»):

Սևակի բանաստեղծություններում էլ յուրովի արտահայտվել է բնության գեղեցկության եղծման ու կործանման ողբերգական միտքը, որին տարբեր երանգներով ու պատկերներով նա վերադառնում է մի քանի անգամ։ Ահա «Էտըլվեյս» բանաստեղծության մեջ հանդես եկող պատկերը՝ սարերից բերված մի ծաղկեփունջ՝ արդեն դժգունած, ամուր կապանքով ոլորված ու գամված պատին։ Եվ ո՞վ զիտե, — խորհում է բանաստեղծը, — գուցե այդ ծաղիկը թառամել ու հյուծվել է, որովհետև նրան «անհա՛ս, հպարտ բարձունքներուն հիվանդ կարուն է որ կայրի», և այժմ էլ նա երազում է ուրիշ հորիզոններ, ուրիշ մի աշխարհ։ Այսպես, բնության մի մասնիկի պատկերը ոչ միայն խորապես իմաստավորվում է, այլև ըստ էության դառնում մարդկային մղումների, գեղեցիկ։ և բարձրի տենչանքի խորհրդանիշ։ Սևակից առաջ էլ ծառի կամ ծաղկի այդպիսի իմաստավորման շատ փորձեր են արվել (հիշենք միայն Հայնեն

¹ Այդ բանաստեղծության առթիվ Սիամանթոն գրում էր Սևակին. «Հրաշալի տրտմություն մը նստած էր այնտեղ, մերկ և մարմարյա, եթե հանգավոր բանաստեղծ մը ըլլայի, հպարտությամբ կստորագրեի այդ փոքրիկ կտորը» («Հայրենիքի ձայն», 1965, № 7):

«Եղևնին», Պուշկինի «Ծաղիկը», Լերմոնտովի «Պաղեստինի ոստը»): Բայց հայ բանաստեղծը կարողացել է խոսել պատկերի և հույզի ինքնատիպ լեզվով:

Բնական գեղեցկության աղճատման միտքը տիրապետող է նաև «Կարապի երգը» բանաստեղծության մեջ: Աղատ ջրերից բռնի խլված, քաղաքի վանդակապատ մի լճակ նետված և նորից «մեծ լիճերու անսահման կապույտը» տեհոչացող ծեր կարապի պատկերը նույն հուզական ու գաղափարական իմաստն ունի, ինչ և պատին գամված էտըլվեյսի ծաղկեփնջինը: «Սրինգ» բանաստեղծության մեջ էլ Սևակը գտել է պոետական տրամադրությանն ու ներշնչանքին համապատասխանող մի պատկեր: Այս շորացած փայտի կտորը չէ՝ որ մի ժամանակ փթթող ծառի ճյուղ է եղել՝ լեցուն նեկտարով ու ցողով,— խորհում է բանաստեղծը և մի անհուն հարազատություն է զգում այդ «տարաբախտ ոստի» հանդեպ: Եվ նա ուզում է իր երգով նորից շունչ, կենդանություն հաղորդել սրինգի շորացած իրանին, պատմել նըրան իր սրտի ամենանվիրական իղձերը.

Ո՞վ իմ սըրինգ, ո՞ստ երկնատուր,
Զորցած կուրծքիդ ես տամ հոգիս.
Ու դուն ե՛րդ տուր, դոսն վերե՛լք տուր,
Երկինքներ տուր հիվանդ շումշիս...

Նշված գործերում, ինչպես և այլ բանաստեղծություններում, Ռ. Սևակը կարողանում է, այս-

պես ասած, առարկայացնել մարդկային տրամադրությունը, զուգակցել կոնկրետ իրավիճակի, բընության տեսարանի կամ երևույթի հետ, որի շնորհիվ էլ այն դառնում է շատ ավելի աղղեցիկ ու հիշվող։ Զգացմունքը դառնում է պատկեր, կազմելով քնարական բանաստեղծության ամուր հիմքը։ Այս առումով տպավորիչ է նաև «Հին եղանակ» բանաստեղծությունը։ Մի շատ սովորական բանի մասին է պատմում բանաստեղծությունը, այն մասին, թե ինչպես հանկարծ չգիտես որտեղից մեր գիտակցության մեջ է մտնում մի հին, ծանոթ եղանակ, կենդանացնում կարու ու թանկագին հուշեր, ապրեցնում մի անբացատրելի քաղցր տրամադրությամբ։ Գուցե լեռներէ հովը բերեց այդ եղանակը, արթնացնելով հեռավոր ճամփաների հիշողություն և անրջանք։ Երկա՛ր-երկա՛ր է ապրում այդ հին եղանակը ձեր էության մեջ։

Երգը մեռա՛վ հեռուն անհետ。
Բայց ա՛յդ շափով, ա՛յդ հանկերգով,
Պատուհանիս գիշերին քով,
Հոգիս կուլա՛ դեռ երգին հետ...

Կարդալով բանաստեղծությունը, մենք էլ մի պահ ներշնչվում ենք մի յուրօրինակ «Երաժշտական տրամադրությամբ», ապրում բանաստեղծին ոգևորած անորոշ, բայց հաճելի տպավորությունը։

Ի. Սևակը կերտել է և մի շարք բնանկարներ, որոնք արտաքուստ «Հեղոք» են, չեն համադրվում

մարդկային որևէ տրամադրության հետ, բայց ըստ էռթյան ամբողջովին ներծծված են հույզով ու վերաբերմունքով։ Դրա լավագույն օրինակ-ներից է «Վերջալույս» բանաստեղծությունը, ուր, հիրավի, խոսքը գեղանկարչական հատկություն է ստանում, գծագրելով շատ տեսանելի, իրական մի բնանկար։ Աշնանային վերջալույսի քամուց «խոռվեր է լճակին կապուտակ սիրտը աղվոր»։ Հովը տանում է զանգակատան երգը հեռու-հեռուներ, սարերին պատմելով մի սգավոր պատմություն։ Իսկ այնտեղ՝

Հեռուն ծառեր կան տեղ-տեղ՝ ափունքն ի վար լճակին。
Տերևաթափ, հողմակոծ, անոնք կանգներ են հըլու,
Ու ճյուղերնին դեպի ջուր դողդողալով կը հակին,
Կարծես հազար գաղտնիքներ ունին լիճին պատմելու

Բանաստեղծության հաջորդ տներում խոսքով վրձինված բնության համայնապատկերը լրացվում է նոր ու նույնքան տպավորիչ նրբագծերով. ահա հովից քշվող ամպի ծվենները, որոնք «կանցնին հալածող անուրջներու պես տրտում», դողդողալով հալող ու մարող արեգակի գունդը, որն այժմ միայն սառնություն է սփոռում շորս բոլոր, և վերջապես՝ «սառած ծովու մը նման» փոված կապարյա անհուն հորիզոնը։ «Վերջալույսը» բնության նրբությունները տեսնելու և նկատելու ունակությամբ մեծարենցյան ուժի հասնող բանաստեղծություն է, այն ստիպում է վերհիշել «Ծիածանի» հեղինակի «Աքասիաներու շուքին տակ», «Այգ-

երգ», «Յնորոտ անդորրություններ» և այլ գործեր։ Մեծարենցն այդպիսի բանաստեղծություններն անվանում էր «զուտ նկարագրական ոտանավորներ», մի հատկություն, որը, սակայն, չի բացառում կենդանի, ինքնատիպ զգացմունքի առկայությունը նրանց մեջ։ Նույնը կարելի է ասել նաև Սևակի լավագույն բնանկարների մասին։

Թերևս ոչ մեկը արևմտահայ նշանավոր բանաստեղծներից այնքան շատ երգեր չի նվիրել սիրո զգացման և սիրած էակի պատկերմանը, որքան Ռուբեն Սևակը։ Սիրո հույզերն ու պահերը նա աշխատել է պատկերել բազմազան կենսական վիճակներում, տրամադրության շատ տարբեր ելեկջներով։ Եթե այս տեսակետից համեմատենք նրան իր նախորդների և ժամանակակիցների հետ, ապա կնկատենք որոշակի տարբերություն։ Մկրտիչ Պեղիկթաշլյանի երգերում սերը մի մեղմ էլեգիական տրամադրություն է, իսկ սիրո առարկան՝ բավական հեռու, հրապուրիչ մշուշով պարուրված մի էակ, որին բանաստեղծը միայն հեռվից է դիտում և հիանում («Գնացե՞ք, իմ տաղք», «Առ զեփյուսն Ալեմտաղիի»)։ Պետրոս Դուրյանն ավելի մոտեցավ սիրած էակին, բայց դրա հետևանքով բանաստեղծի մերժված սիրո զգացմունքն էլ դարձավ ծայր աստիճան ողբերգական ու ցավագին, մի շլուղ փոթորկով և անհուն տառապանքով լցրեց պատանի հանճարի հոգին («Մնաս բարյավ», «Սիրել», «Դրժել»)։ Միսար

Մեծարենցի բանաստեղծություններում սերը մեծ մասամբ մնաց հեռավոր երազանքի, ոռմանտիկ ապրումների և տենչերի ոլորտում («Վայրկյանը», «Ճառագայթի պես ոսկեվարս ու նրբին»..., «Ճուրեն դարձին»): Ընդհակառակը, Դանիել Վարուժանի հատ ու կենտ սիրո երգերում ընդգծվում էր այդ զգացման տոնական ուժը, մարմնական վայելքի պահերը («Ո՞վ կալագե», «Գրգանք», «Ո՞՛ Տալիթա» և այլն): Սիամանթոն գիտակցաբար «հեռու պահեց» իր քնարը սիրո և անձնական այլ մոտիվներից: Իսկ դարասկզբի մյուս, երկրորդական բանաստեղծների երգերում տիրապետող էին սիրո մարմնապաշտական արծարծումները:

Ռուբեն Սևակն ավելի բազմակողմանի է պատկերել սիրո զգացման, վայելքի ու տանջանքի պահերը: Մի քանի տասնյակի հասնող նրա սիրային բանաստեղծությունները ներկայացնում են սիրո մի ամբողջ պատմություն՝ իր երջանիկ ու դըժբախտ պահերով, երազներով ու հուսախարություններով: Բանաստեղծի համար սերը այն ըզգացմունքն է, որից բարձր ուրախություն և աւուապանք չկա. «Սերն հեթանոս երջանկությունն է խաշված, սերն ա'յն կուտքն է, որուն առջև ծընրադրած որբի՛ մը պես պիտի ողբար ի'նքն Աստված...»,— գրել է Սևակը մի բանաստեղծության մեջ¹: Նրա երգերում սիրո առարկան մերթ հան-

¹ Ռ. Սևակ. Սերը, «Ետնթ», Կ. Պոլիս, 1912, № 27, լշ 97:

դես է գալիս երազային, անորոշ գծերով, դառնում է հեռավոր տեսիլքի նման անորսալի և անհայ («Սիրո մըմունց», «Սիրո աղբյուր», «Հավիտենական հեքիաթը»), մերթ էլ ձեռք է բերում իրական. շոշափելի ձևեր, պատկերվում է իր մարմնական գեղեցկությամբ և պատճառած արբեցման տրամադրությամբ («Քնացող աղջիկը», «Ահա կերգես. Դասիանա», «Եկո՞ւր»): Այդ երկու կողմերի զուգակցման իմաստով բնորոշ է «Երգ-Երգոց» բանաստեղծությունը: Տվյալ դեպքում այս վերնադիրն արդարանում է նրանով, որ դա իրոք սիրային թեմայով գրված Սևակի ամենաուժեղ գործերից մեկն է: Բանաստեղծությունն սկսվում է սիրած էակի անրջային, մշուշոտ պատկերներով.

Երա՞գ. տեսի՞լ, անդո ստվե՞ր մ'անհոգի,
Ճառագայթի, փրփուրի խա՞ղ մը տարտամ:
Քմայապաշտ ծաղի՞կ մ'արդյոք ցընորքի,
Քու մշուշոտ գիծերուդ ի՞նչ անուն տամ.
Երա՞գ. տեսի՞լ, անդո ստվե՞ր մ'անհոգի:

Բայց քանի գնում ավելի որոշակի գծեր է ստանում այդ էակի դեմքը, և մենք տեսնում ենք նրա եթերային աշքերի կապույտն ու վարդանման շուրթերի կարմիրը, լսում ենք «Ճայնը տարփոտ՝ աղբյուրներու երգին պես», զգում նրա մարմնից «Ճորող խունկը մեղավոր»: Եվ բանաստեղծն արդեն հիացմունքի բուռն մղումի մեջ բացականշում է.

Հրաշագո՛, ո՞հ, քու անդրիդ բյուրեղե.
Սրունքներուդ սարսռացնող ձյումն հրաշեկ,
Ու անանո՛ւն ցոլքը որ քեզ կողողե,
Մորթիդ թաքուն գանգուրներուդ խուրծը շեկ...
Հրաշագո՛... ո՞հ, քու իրանդ բյուրեղե:

Սիրո արբեցման նույն ուղին է անցնում քնարական հերոսը «Եկո՞ւր» բանաստեղծության մեջ։ Այստեղ էլ նա իր «անուրջի ճամփաներեն» կանչում է սիրած կնոջը, որն ըղձալի է նրա համար «երգի մը պես, քրոջ մը պես, մոր մը պես», անվանում է իրեն նրա «արքան ու գերին»։ Իսկ շարունակության մեջ նրա հոգու և երեակայության վրա իշխում են արդեն մարմնական մտերմության տենչերը.

Բա՛ց ինձ կարմիր շրթներդ կարմիր վերքի պես,
Բա՛ց ինձ թևերդ, հավերժական բա՛նտ անուշ,
Բա՛ց ինձ հոգուդ հրաշքներուն մուտքն անտես
Ու տար ինձ հոն անէանալ, լուռ, անհուշ...

Բանաստեղծը երբեմն հասնում է լարված զգայունակության, ամբողջ էությամբ ապրելով կանացի հմայքի ամեն մի պահ։ «Ժպիտ» բանաստեղծության մեջ, օրինակ, «կանացի միստիկ ժպիտը» տարածվում, պարուրում է բանաստեղծի բովանդակ հոգին։ Այդ ժպիտի մեջ նա զգում է «հազար բույրեր», լսում է խոսքեր՝ «սիրով, տենչով, ցավով հղի», այդ ժպիտը անուրջի պես ալիքվում և ողողում է նրա էությունը, տանում այնտեղ, ուր ուզում է։ Եվ քնարական հերոսն ար-

դեն ինքնամոռացության մեջ կարող է բացական-
շել.

Ահա գերին եմ հըպումիդ.
Սև աշերուդ մութը բոլոր
Զիս կը վարե քայլամոլոր...
Ո՞ւր, ո՞ւր այսպես, ահե՛ղ ժպիտ...

Հոգեկան և մարմնական մտերմության նույն
տրամադրությամբ է գրված նաև «Բույրը»։ Այս-
տեղ էլ բանաստեղծը երգում է կանացի մարմնի
զգլխիչ բույրը, որը նրա համար լի է անանց
խորհուրդով. այն «խունկի պես միամիտ է, ու
մեղքի պես մեղավոր», «դավադրության պես ա-
հավոր, աղոթքի պես միամիտ» և, վերջապես,
«շար ու բարի, գինով ու կույս»։ Եվ նորից գերող
ու տագնապ ազդող տրամադրությամբ է ավարտ-
վում բանաստեղծությունը.

Կեցի՛ր, կեցի՛ր, ա՛խ, ո՞ւր կերթաս.
Շրթներըս քեզ կը հևան,
Ըսէ, Սիրո՞ւ, Մեղքի՞ւ, Մահվա՞ն
Ինձ հըրավեր կը կարդաս...¹։

Սակայն պետք է ասել, որ Սևակի բանաստեղ-
ծություններում նույնիսկ այսպիսի տրամադրու-
թյունները չեն վերածվում մարմնապաշտության։
Արտաքին հմայքի պատկերները առողջ հոգեկան
կապի և նվիրվածության շարունակությունն են
միայն, ենթարկված նրանց, բայց ոչ երբեք հի-

¹ «Շանթ», Կ. Պոլիս, 1912, № 20, էջ 319,

վանդագին մարմնապաշտության արտահայտություն:

Սևակը պատկերում է նաև մերժված և երջանիկ սիրո իրական վիճակներ: Սիրո բուռն սպասման, հավատի և հիասթափության բնական՝ պահեր են ցուցադրված, օրինակ, «Պատասխանը», «Նամակը», «Պիտի սպասեմ» բանաստեղծություններում: Իրական հերոսներ և սյուժետային որոշ կապեր կան այնպիսի գործերում, ինչպես «Համբույրը», «Ամենուն պես» և այլն:

Սևակի բանաստեղծություններում սիրո փիլիսոփայության բնորոշ կողմերից մեկն էլ այն է, որ սիրո զգացումը շատ հաճախ զուգակցվում է մահվան սպասման և պատրաստակամության հետ: Բայց դա մահվան սարսափով չի լեցնում նրա երգերը: Մահը, բանաստեղծի պատկերացմամբ, ոչ թե ոչնչացում է, այլ սիրո հավերժացման միջոց: Սիրո վայելքի ճանապարհին մահն էլ թվում է քաղցրագին մի պահ: Իր սիրային բանաստեղծություններից մեկը Սևակն ուղղակի կոչել է «Մահազգացում», բայց դա ոչ թե մահ է սովորական առումով, այլ սիրո մեջ անէանալու և հավերժանալու տենչանք: «Մեռնի՛լ, մեռնի՛լ... Անմահանալ մահվան մեջ», — սա բանաստեղծի համար նշանակում է ամբողջովին հանձնվել սիրած էակին, որին նա անվանում է «քո՛ւյր մահանո՞ւշ, քույր մահազոր, մահագին...»:

Մի այլ բանաստեղծություն կոչվում է «Սիրո

և մահվան երգը։ Սերն ու մահը այստեղ էլ, իրոք,
միաձուլվում են, պոկտի խոսքերը հնչում են «Սի-
րո պես քաղցըր ու Մահվան պես հըզոր», և նա
երազում է գնալ «սիրո կղզիներեն դեպի մահ»։

Իմ կյանքը թող առվին երդին պես ըլլա
Ու երդս անվանդ կրկնումն ըլլա թող հավերժ,
Իմ կյանքըս թող մո՞ւթ ջրվեժի ողես ըլլա
Ու դեպի քեզ անկում մ'ըլլա դահավեժ,
Իմ կյանքըս թող առվին երդին պես ըլլա...

«Առվի երգը», որի մասին խոսվում է այստեղ,
բանաստեղծի համար մի յուրօրինակ խորհրդա-
նիշ է. չէ՞ որ ամեն մի վտակ ու գետ ի վերջո
ավարտում է իր ուղին՝ խառնվելով ծովի մեծ
տարերքին, բայց դիմում է դեպի իր վերջնական
հանգրվանը երգով ու կարկաչով, ասես ցնծու-
թյամբ ընդառաջ գնալով մահվան։ Այս պատկե-
րը, որին հանդիպում ենք Սևակի «Յնծուն մահ»
բանաստեղծության մեջ, դառնում է մի խորիմաստ
զուգադրման հիմք. իսկական սերն էլ պետք է լինի
յուրօրինակ ինքնազոհաբերում, սեփական էու-
թյան ձուլում մի ուրիշ էակի հետ, հրաժարում
ամեն մի նեղ անձնական տրամադրությունից։

Ահա թե ինչու մահվան միտքը Ռ. Սևակի բա-
նաստեղծություններում գրեթե միշտ դառնում է,
—որքան էլ սա հակասական թվա,— սիրո ամե-
նազոր ուժի հաստատման ձևերից մեկը։ Այս
առումով հետաքրքիր է 1911 թ. գրած բանաստեղ-
ծությունների շարքը, որոնք կապվում են իրար

Հետ տրամադրության և հիմնական կերպարի ընդհանրությամբ։ Դա սիրո ու հավատարմության նշանաբանով կռվի և մահվան ընդառաջ գնացող ասպետի կերպարն է, որը հանդես է գալիս «Ասպետի երգը», «Գացող մարդը», «Լույսով», «Վերջին կոչը», «Սիրո ծարավ» բանաստեղծություններում։ Միջնադարից եկող ավանդական կերպարի միջոցով բանաստեղծն արտահայտում է իսկական սիրո ուժը, անձնվիրությունը, հանուն սիրո ինչ-որ մեծ և գեղեցիկ բան իրագործելու պատրաստակամությունը։ Ասպետը, որը «սրտես է վիրավոր», Սևակի բանաստեղծություններում դառնում է սիրո ռոմանտիկ, որոշ առումով «վերերկրային» պատկերացման կրողը։ Այդ սերը կարող է մղել ամեն մի արգելքի հաղթահարման, նույնիսկ ինքնազոհաբերման։ Այսպիսի տրամադրությամբ համակված բանաստեղծը, բնական է, պետք է ողբերգորեն վերապրի ցանկալի, իդեալական սիրո և առօրյա կյանքի հակասությունը, մի հակասություն, որը եղել է անցյալի շատ նշանավոր քնարերգակների եղերական ապրումների հիմնական ակունքներից մեկը։

Ահա «Սիրո մրմունջ» բանաստեղծությունը, որը Սևակի վաղ շրջանի գործերից է (1908)։ Մի պահ այնքան մոտ թվացող, բայց և հեռացող, անորսալի դարձող սիրո պատկերը բանաստեղծն արտահայտել է հարազատ ափերից հեռացող նավակների պատկերով։

Անոնք դացի՞ն խորհուրդով ու գաղտնիքով բեռնավոր,
Դացին նավերը սիրույս իմ աշքերուս առջևեն,
Ցըռուկնին վեր, դեպի մութ եղերքները հեռավոր,
Առագաստները գինով, մայրամուտի գաղլ հովեն:

Մի պատկեր, որն անմիջապես հիշեցնում է
Մ. Մեծարենցի «Նավակներ» բանաստեղծու-
թյունը.

Նավակներ մեկնեցան ամենն ալ, բաղձանքով ակաղձուն.
Հեռացան ամենն ալ՝ ծըփանուտ երազիս ափունքեն.
Անձուկին բոցը զիս պաշարեց. Ըսպասման հիվանդն եմ...

Սիսալ չի լինի, եթե ասենք, որ «Սիրո մըրմուն-
ը» գրված է «Նավակների» անմիջական տպավո-
րության տակ (Մեծարենցի բանաստեղծությունը
տպագրվել է ավելի վաղ՝ 1907 թ. գարնանը լույս
տեսած «Ծիածան» ժողովածուի մեջ)¹: Բայց ավե-
լի էական է երկու բանաստեղծների տրամադրու-
թյունների ընդհանրությունը՝ գեղեցիկ երազանքի

¹ Մեծարենցի պոեզիայի ուրիշ «արձագանքներ» էլ կա-
րելի է նշել Ռ. Սևակի բանաստեղծություններում: Օրինակ,
Սևակի «Ո՞վ իմ հայրենիքս...» բանաստեղծության առաջին
տողը («Յայգն ի՞նչ անուշ է, ցայգը ի՞նչ գինով») իսկույն
հիշեցնում է Մեծարենցի հոչակավոր «Սիրերգի» սկիզբը. «Գի-
շերն անուշ է, գիշերն հեշտագի՞ն, հաշիշով օծում ու բալա-
սանով»: Նույն «Սիրերգի» շունչն է զգացվում նաև «Դինով
գիշեր» բանաստեղծության մեջ. «Օդին մեջ խունկ կա, օդին
մեջ համբույր» և այլն: 1908 թ. գրած մի նամակում, Մեծա-
րենցի մահից մի քանի ամիս առաջ, Ռ. Սևակն այսպես էր
գնահատում նրան. «Այս տղուն սիրած եմ իր մեկ քանի
զգայուն և խոր տաղերուն համար», Այդ նամակում նա միա-

և գորշ իրականության հակադրության մոտիվը, որը ոռմանտիկ երանգ է տալիս նրանց ստեղծագործության այդ էջերին։ Այդ մոտիվն է արծարծում նաև «Անկարելի սեր» բանաստեղծությունը, որը կարճ, բայց ազդեցիկ, իր զուսպ տողերի մեջ հարուստ տրամադրություն ամփոփող մի գործ է։

Ես այգերով ու ցայգերով
Հաճախ մենակ կ'անրջեմ,
Անհնարին, երկնագորով
Սեր մը, որուն տերը շեմ...:

Երաղանքի և իրականության հակադրությունն ավելի է ուժեղանում մի այլ պատկերով։ Բանաստեղծին երևում են «զույգ մը աշեր որ գույն չունին» (գույն չունեցող աշքերի պատկերը հենց կոշված է ընդգծելու սիրո աներկրային, անրջային բնույթը), «բայց կըսպանեն տեգի պես»։ Բանաստեղծությունն ավարտվում է բարձր և անբիծ սիրո բացակայության ողբերգական հավաստումով։

Կուզեմ մեռնիլ դյուցազնային
Սիրո մ'համար աղջըկա,
Հետո աշերս վար կը նային՝
Ուր է այն Սերն, ա՞խ, չըկա՛...

Ժամանակ քննադատում էր Մեծարենցին՝ շտապելու, իր տաղանդից ցածր գործեր տպագրելու համար և բանաստեղծի երկրորդ դիրքը՝ «Նոր տաղերը» համարում էր սուազինից ավելի թույլ (ԳԱԹ, Ռ. Սևակի ֆոնդ)։

Սևակի սիրային բանաստեղծություններում հանդես եկող ովքերգական տրամադրությունների աղբյուրը հենց այն դիտակցությունն է, որ ժամանակակից կյանքում, մանր կրքերի և մղումների իշխանության պայմաններում, մեծ, ազնիվ ու գեղեցիկ սերը անկարելի է, անհասանելի։ Այս խոհերից էլ ծնվում է մեկ այլ տրամադրություն. իսկական սերը պետք է մնա միայն քո հոգու խորքում, անհայտ մնալով անտարբեր աշխարհին, նույնիսկ նրան, ում նվիրված են քո սիրավառ տենչերը.

Ճիշտ սերն ան է, որ չես ըսեր
Բարեկամիկ ու թշնամուդ,
Կը մարես քու հետին լույսեր
Եվ կամփոփկես սրտիդ մեջ մութ,—

զրել է Ռուբեն Սևակը «Ճիշտ սերը» բանաստեղծության մեջ¹։

Պետք է հիշատակել նաև «Ինչո՞ւ» վերնագիրը կրող երգը, որը ժամանակին բավական տարածում է ունեցել.

Ինչո՞ւ, ինչո՞ւ զիս սիրեցիր,
Փոքրիկ աղջիկ, քեզի մե՛ղք էր.
Փոքրիկ ծոցիդ թիթե՛ռ պետք էր.
Դոմ ծեր արծի՛վ մը բանտեցիր...

Եվ այսպես, բանաստեղծության հաջորդ երեք տներում կս գեղարվեստորեն աղղեցիկ արտահայ-

¹ «Առվետական գրականություն», 1965, № 4, էջ 60.

տություն է ստանում սիրո զգացման ներքին ողբերգությունը, որը ծնվում է ձգտումների, կենսական պատկերացումների տարբերությունից:

Իուբեն Սևակի «Սիրո գիրքը», որի մեջ մտնող բանաստեղծությունների մի մասը միայն ներկայացվեց այստեղ, ընթերցողի առջև ցուցադրում է բանաստեղծի և նրա քնարական հերոսի ապրումների ու մղումների ներքին հարստությունը, մարդկայնությունը, վարակիչ անկեղծությունը:

4

Ինչպես տեսանք, իր ստեղծագործական կյանքի գրեթե ողջ ընթացքում, մոտ 10 տարի (1905—1914) Ռուբեն Սևակն ապրում էր Հայրենիքից հեռու: Բայց կարո՞ղ էր նա անտարբեր լինել Հարազատ ժողովրդի ճակատագրի նկատմամբ, որն ավելի ու ավելի ծանր, շարագուշակ բնույթ էր ստանում սուլթանական Թուրքիայի արյունոտ մագիլներում: Կարո՞ղ էր նա ինքնագոհ տարվա շվեյցարական խաղաղ ու գեղեցիկ հորիզոններով, երբ Հայրենակիցների արյունը ներկում էր Հայաստանի լեռներն ու ձորերը: Ճշմարիտ բանաստեղծը շէր կարող շարձագանքել իր ժողովրդի կյանքում տեղի ունեցող մեծ ողբերգությանը, շէր կարող յուրովի շորոնել փրկության ճամփաներ:

1909 թվականից Ռուբեն Սևակի ստեղծագործության մեջ սկսվում էն Հայրենիքի ճակատագրի, նրա ներկայի և հեռանկարների գեղարվեստական արծարծումները: Այդ թեմայի սկզբնավորման կոնկրետ առիթը դարձան 1909 թ. Աղանայի Հայկական մասսայական կոտորածները, որոնք ցույց

տվեցին, թե «Երիտասարդ թուրքերի» «Հեղափոխությունը» իրականում ոչ միայն չի ապահովում հայերի անվտանգությունը, այլև շարունակում է հին քաղաքականությունը ավելի դաժան, անողոք ու նենգ ձևերով։ Շվեյցարիայում գտնվող երիտասարդ ուսանող-բանաստեղծն անմիջապես արձագանքեց այդ դեպքերին՝ պոլսահայ մամուլում տպագրված «Ուսանողի նամակներով» և հայրենասիրական բանաստեղծությունների մի ամբողջ շարքով։

«Ուսանողի նամակներում» Սևակն արտահայտում էր Հայաստանից հեռու գտնվող հայրենակիցների տագնապն ու տառապանքը վայրագ կոտորածների առթիվ, զայրույթով գրում էր հայ հասարակության որոշ շրջանների և մամուլի օրգանների անտարբերության մասին, գործուն հայրենասիրության կոչ էր անում։ «Սև օրեր կապրինք նորեն, սարսափի օրեր։ Հեռագիրները ամեն ժամ նոր գույժ մը կը բերեն։ Զա՞րդ. ու եթե ջարդ չէ, հրդե՞հ. ու եթե հրդեհ չէ, սո՞վ. ու ինչ որ ամենեն սարսափելին է, համաճարակ։ Լրագիրները ամեն օր սուգի նոր գին մը կավելցնեն»¹։

Ավա՞ղ, այդ է դաժան իրողությունը. հայրենիքի հասկացությունը բանաստեղծի գիտակցության մեջ ակամայից նույնանում է սովի ու համաճարակի, ջարդի ու հրդեհի պատկերների հետ։

¹ Ռ. Սևակ. Ուսանողի նամակները, «Աղդակ», 1909, № 23, էջ 363.

իզուր չէ, որ իր հայրենասիրական լավագույն բանաստեղծություններից մեկը Սևակը վերնագրել է պարզապես «Հայաստան» և նրա մեջ խոսել միայն երեք բանի՝ դարիբի, սովի ու ջարդի մասին։ Շատ կարճ է այդ բանաստեղծությունը՝ ընդամենը վեց տող, բայց իր ներքին դրամատիզմով, ողբերգական բովանդակության հարստությամբ թվում է մեծ ու տարողունակ։

Ո՞վ կուլա այսպիս խշայակիս շեմքին.
— Քո՞ւր, դարիբն է, բա՛ց...

Կմա՞խք մը կանցնի դուրսին լալաղին.
— Սո՞վն է, դուռըդ բա՛ց...

Տալա՞րն է ջախջախ դռանըս կուրծքին.
— Ջա՞րդն է, դուռըդ բա՛ց...

Այս բանաստեղծության մեջ Սևակը հասել է ծայրահեղ ժլատ միջոցներով, նույնիսկ երեսութիւ արձանագրական հիշատակությամբ մի ամբողջ պատկեր, զգացմունքների բուռն հորձանք արտահայտելու արվեստին, որը թերևս ամենից դըժվարինն է։

Վերադառնանք Սևակի այն բանաստեղծություններին, որոնք նա գրել է Աղանայի կոտորածների անմիջական տպավորության տակ («Ո՞վ իմ հայրենիքս...», «Ճանգակնե՞ր, զանգակնե՞ր...», «Կիլիկյան երգեր», «Ինչպես երբեմն...» և այլն)։ Հայրենիքի դժբախտության, մեծ ու համատարած ողբերգության տրամադրությունն է իշխում նրանց մեջ՝ արտահայտված մերթ անզոր հուսահատու-

թյան, մերթ առնական ու անհաշտ զայրույթի շեշտերով։ Հատկանշական է, որ ինչպես մի ժամանակ Մ. Պեշիկթաշլյանը իր «Գարուն» բանաստեղծության մեջ, Սևակն էլ հակադրում է օտար բնության հովվերգական գեղեցկությունը, հանգըստությունը հայրենի երկրի աղետավոր ու արյունոտ վիճակին և նախընտրում է վերջինս, հայտարարում հարազատ աշխարհի հետ իր անխղելի հոգեոր կապերի մասին։ «Ո՞վ իմ հայրենիքս...» բանաստեղծության մեջ լեմանի գեղահրաշ բնության պատկերներն իրենց տեղը շուտով զիջում են Հայաստանի ողբերգական կացության ցնցող տեսարաններին։

Ով դո՞ւն, ո՞վ դժբախտ երկիր հայրենի,
Որ արյունի տա՞ք շամանդաղի մեջ,
Զո՞հ՝ գազաններու խաղին վայրենի,
Ու համայնասպա՞ռ բոցերու անշեց,
Կը մըխաս, դժբա՞խտ երկիր հայրենի...

Ավա՞ղ, սիրելի հայրենիքում ամեն ինչ այլ է. նրա գետերի ու լճակների վրա երազային կարապներ չեն լողում, Արարատի լանջերին հովվերգություններ չեն լսվում։ Ամենուր յաթաղանից փախչող մարդկանց վայունն է տարածվում, ամեն տեղ տեսնում ես «բոբիկ երեխա», դողդոջ ծերունի» և անվերջ դիակներ...

«Հո՞ւ, մե՞նք ենք, մե՞ղք ենք, եղբայրնե՞ր, քույրե՞ր...
Մե՞նք ենք լավլիզված բոցերե անշեց...
Մերկ սուսերներով հալածված կույրեր...

Մենք ենք, կվազենք Մութի՛ն, Մահվա՛ն մեջ,
Հո՛ւ, մե՛նք ենք, մե՛րի ենք, եղբայրնե՛ր, քույրե՛ր...

Այդ և հաջորդ տարիներին գրած մի շարք
հայրենասիրական բանաստեղծություններում
(«Զանգակնե՛ր, զանգակնե՛ր...», «Ահաղանգերը»,
«Հայու դատիկ» և այլն) Սևակը նորից ու նորից
դիմում է գուժկան զանգակների գեղարվեստական
պատկերին, նրա միջոցով արտահայտում հայրե-
նիքի ողբերգության, բողոքի ու վրիժառության:
Խոհերը: Բանաստեղծը գտել է մի իմաստալից և
խորհրդանշող պատկեր. հայոց եկեղեցիների զան-
գերը, որոնք դարերով հնազանդության, բարու-
թյան երգեր են հնչեցրել, այժմ ականատես են
բյուրավոր անմեղ մարդկանց մորթոտմանը, որով-
հետև ամենուր իշխում է բիրտ ուժի իրավունքը,
իսկ եղբայրության խոստումները սոսկ «զուր բար-
բառներ» են: Բանաստեղծն ուզում է «ծերուկ, բա-
րի զանգակներից» ուրիշ երգեր լսել՝ ոչ թե լացի
և հնազանդության, այլ վրեժի մարտական ձայ-
ներ.

Ինչպե՞ս կուզեի ես ձեր պարանին
Կախվել ու ցնցել երկաթ բազուկով.
Անոնք որ ինկան բյուրով, քովե քով,
Զեր ղողանշին հետ՝ լալու պետք ունին...

Հոգիիս հաղար խուզ զանգակներով
Գոռացե՛ք, զանգեր, ու կատաղորեն
Գահավիժեցե՛ք ձեր երկաթ թառեն,
Ուրկե միայն լալ գիտցաք դարերով...

Կոտորածի, նախճիրի լուրերը խուժում են բանաստեղծի հոգին դժոխային պատկերներով, համակում ողբերգական տրամադրությամբ և նախազգացումներով։ Մի համատարած դժբախտության ահազանգով է լեցուն պոետի էռթյունը։ Սիամանթոյի նման նա էլ մերթ խելահեղ սարսափի ճիշեր է արձակում ու մերթ մարտական վրեժի ձայներ հնչեցնում։ «Ահազանգերը» բանաստեղծությունը այդ տրամադրությունների ամենաուժեղ արտահայտություններից մեկն է, ուր իշխում են հատկապես ողբերգական շեշտերը.

Արյունի գիծե՞ր, պատկերնե՞ր, հուշե՞ր...
Նորեն այս գիշեր,— տանջանքի գիշեր,—
Հիվանդ հոգիիս սլատերուն մեջեն
Ղողանջի խավար երգեր կը հնչեն,
... Ղողանջը... Ողբի, աղեխարշ լալու,
Ճիշի, անեծքի՛—վայրագ ալելու—
Ու հառաշներու մեջեն խելահեղ
Սարսափի անհո՛ւն զողանջն է ահեղ:
...Կարմիր կը տեսնեն աշքերըս նորեն...
Վերջին հառաշներ կուրծքերու խորեն.
Մեռե՛լ, հոգեվա՛րք, կույտ-կույտ, քով-քովի
կոկուացող սև խումբեր ագռավի...¹:

Ադանայի աղետին Սևակն արձագանքեց նաև «Կիլիկյան երգերի» բանաստեղծական փոքրիկ շարքով։ Այդ երգերի հիմնական իմաստը վրեժի տրամադրության սերմանումն է։ Այդ սևեռուն

¹ «Շանթ», Կ. Պոլիս, 1918, Խ 2, էջ 18:

մտքով է համակված մեռնող հայուհու օրորոցաշին երգն իր մանկան համար («Վերջին օրոր»).

Արյան հեղեղ հորդեց այս սուրբ ձորերե,
Բայց չի փախիս, փարե երկրիդ, զայն սիրե,
Հողիդ վրա գերի մ'ըլլար, այլ տիրե,
Օրո՞ր ըսեմ՝ քնանաս:

Ահա կի՞յնամ... Հայաստանը մա՞յր քեզի,
Կտակ կուտամ այս կոտրած սուրն երկսայրի՝
Ուր հայրիկիդ դեռ տաք արյունը կայրի...
Օրո՞ր ըսեմ՝ քնանաս:

Բանաստեղծի կոշումն էլ Սևակն այժմ տեսնում է նրա մեջ, որ նա պետք է լինի «Վրեժին սերմնացանը» (Հենց այդպես է կոշվում շարքի բանաստեղծություններից մեկը)¹, որովհետև եթե նա անձամբ չի կարող զարնել թշնամուն, ապա նրա տողերից պետք է «Մահու առաքյալնե՞ր, հսկանե՞ր» ծնվեն:

Ո. Սևակի հայրենասիրական լավագույն բանաստեղծություններից մեկը նույն 1909 թ. գըրված «Ինչպես երբեմն...» սոնետն է: Շատ ինքնատիպ կառուցվածք ունի այս բանաստեղծությունը, և նրա իրական իմաստը առաջին հայացքից քիչ հասկանալի կարող է թվալ: Սոնետի 14 տողերից 13-ը իրենցից ներկայացնում են ծեր քերթողին ուղղած դիմում, որով նրան կոչ են անում

¹ Սևակի երկերի 1955 թ. հրատարակության մեջ այդ բանաստեղծության վերնագիրը սխալմամբ դարձել է «Վերջին սերմնացանը» (էջ 111):

Երգել հին դարերի փառքը, պանծացնել հայրենի
պատմության վեհաշունչ դրվագները.

Քերթո՞ղ, պատմե՛ մեզ հայրենի հուշքերեղ,
Երգե մեզ հի՞ն օրերու երգ մը անհետ,
Թափառական թրուպատուրի երգ մը զո՞վ,
Արբշիռ ու դով մեր Գողթանի ողկույզո՞վ:

Եվ ապա բանաստեղծության մեջ հիշատակ-
վում են հեթանոս դարերի դրվագները, ազգային
հզորության և փառքի ժամանակները: Թվում է,
թե սոնետը հենց գրված է այդ անցյալը փառա-
բանելու համար: Բայց վերջին՝ 14-րդ տողը սուր
փոփոխություն է մտցնում ամբողջ բանաստեղ-
ծության տրամադրության մեջ. այդ տողն էլ հենց
բովանդակության «Հիմնական ծանրությունն» է
կրում: Ի պատասխան երգչին ուղղած ջերմ կո-
չերի՝

— Քերթողը, ծե՞ր, շըխոսեցավ: Ան կուլա՞ր:

Մենք ասես մի անգամից անցյալից տեղա-
փոխվում ենք հայրենիքի ներկան, որը ոչինչ չի
կարող ծնել ծեր քերթողի սրտում, բացի անլուր
վշտից և արցունքից: Անցյալի վսեմ պատկերնե-
րի և ներկայի դժբախտության սուր հակադրությու-
նըն է բանաստեղծության ողբերգական տրամա-
դրության աղբյուրը: Այդ դժբախտության մասին
ուղղակի ոչինչ չի ասվում, բայց մի՞թե բավակա-
նաշափ պերճախոս չէ երգչի լուր լացը, բանաս-
տեծությունը կտրուկ, հանկարծակի, ասեք խզված
ակորդով ավարտող այդ վերջին տողը: Այստեղ էլ

արտահայտվել է քիչ խոսքերով շատ բան ասելու ունակությունը, որը միայն ճշմարիտ բանաստեղծին է տրված:

Սակայն կիլիկյան ջարդերն արտացոլող ամենախոշոր բանաստեղծական կտավը Սևակի պոեզիայում՝ «Կարմիր գիրքը» վերտառությամբ ժողովածուն էր, որը լույս տեսավ դեպքերից մեկ տարի անց: Այդ գրքի մեջ զետեղված էր երեք քնարական պոեմ՝ «Զարդի խենթը», «Թրքուհին» և «Մարդերգություն»: Առանձին-առանձին դրանք շատ նման են բանաստեղծական շարքերի, որոնք միավորվում են միայն որոշ պատկերների աստիճանական զարգացումով և հատ ու կենտ դեպքերի աղոտ գծագրումներով:

Նշված երեք պոեմներից վերջինը («Մարդերգություն») շոշափում է համամարդկային բնույթի հարցեր՝ սոցիալական հակասությունների, կյանքի և մահվան փոխհարաբերության մասին: Իսկ առաջին երկուսն անդրադարձնում են արևմտահայերի կրած հալածանքները, հայկական ջարդերի անլուր սարսափները: Բայց այս բոլորը տրվում է ոչ այնքան ուղղակի սլատկերման միջոցով, որքան քնարական վերապրման, ակնարկների, աղոտ վերհուշերի ձևով: Օրինակ, «Զարդի խենթը» պոեմում կոտորածների անմիջական նկարագրություն չկա, բայց նրանց մասին պատկերացումը է տալիս կյանքի սարսափներից խենթացած հերոսի «բեմական մենախոսությունը» (սա ամբողջ պոեմի են-

թավերնագիրն է): Պոեմի տարբեր մասերը կարող էին առանձին բանաստեղծություններ կոչվել, այնքան որ թույլ է նրանց ներքին կապը, քմահաճ են անցումները տարբեր հատվածների միջև¹: Եվ դա զարմանալի չէ, քանի որ պոեմում ամեն ինչ ասվում է խելագար մտապատկերներով համակված հերոսի անունից: Մերթ մեր աշքերի առջև գծագրվում են կոտորածի իրական պատկերներ, մերթ խելագարի մտապատրանքներն են ներխուժում, մերթ էլ ապագայի շարագուշակ կանխագացումներն են տիրապետում:

Իսկ ո՞վ է պոեմի հերոսը: Դատելով առանձին ակնարկներից, նա անցել է մոտավորապես Բաֆֆու Սարհատի ճանապարհը. Նախկինում ըմբուտության, անհնազանդության համար վոնդվել է հայրական տնից և այժմ վերադառնալով, հայրենի գյուղում տեսնում է միայն ավերակներ ու դիակներ: Անհամար դիակների մեջ նա գտնում է նաև քահանա հորը, որը մի ժամանակ քարոզել էր որդուն, թե՝ «դրախտ երթալու կարճագույն ճամփան ըլլալն է հըլու, հետեւող խաչի սուրբ արահետին»: Այժմ նա էլ «դրախտ է գնացել» «քուրդի խանչերով», և նրա կողմից արտաքսված որդին ուսերի վրա տանում է նրա դիակը, շզգալով ոչ մի

¹ Պոեմի տասը մասերը վերնագրված են այսպես. Քրքիչը, Թափառումը, Կարմիր դատաստանը, Անոնք որ կուգան, Ծեր քահանան, Գևորգ, Աստվածը, Գիշերին մեջ Երգ, Ոճիրը, Ցեղին ովստը:

խղճահարություն, Հորին էլ համարելով այդքան
դժբախտությունների՝ պատճառներից մեկը։ Խեն-
թացած հերոսը քրքջում է, նայելով շորս բոլոր
սփոված դիակներին, նրանց մեջ ճանաշելով մի
ժամանակ գոհ և անտարբեր ապրող, թշնամու
առջև խեղճություն և հնաղանդություն քարոզող
մարդկանց։

— Է՞ս, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛.

Բայց ինչո՞ւ քրքիջս այսպես կը դողա…

Ահա բոլո՞րն ալ, բոլո՞րն ալ, բոլո՞ր,

Մութին ու լուսին մեջ անդնդախոր,

Պառկա՛ծ խուական, պառկա՛ծ ամբարիշտ,

Պառկա՛ծ քարեղեն ցավի մեջ ընդմիշտ,

Պառկա՛ծ, Աստվա՛ծ իմ. ու որշափ ալ կա՛,

Ու որշա՞փ ալ կա. մինչեւ հեռակա

Ճամփաներուն ե՛ղը փովա՞ծ, կարծես

Անդրհեղեղյան անտառի մը պես…¹։

Հետո հերոսի մտապատկերները մեզ տեղափո-
խում են ապագա՝ «Կարմիր դատաստանի օրը»,
երբ բոլոր մորթված դիակները պիտի ոտքի կանգ-
նեն, գան վրեժ պահանջելու վայրագ խուժանից և
հայության «արյան լոռության գինը» սակարկող
«եվրոպյան աստվածներից»։

Ահա մենք կուգանք, ահեղակորով

Մեր Հույսին կոանիթ գարշապարներով

Խոսեցընելու անանո՞ւն կորած

Գերեզմանոցներն համայնատարա՞ծ…

Ահա մենք կուգանք ու մենք նզովքն ինք,

Ու խավարին մեջ մխված տեգը նենդ.

¹ Ռ. Սեակ. Կարմիր գիրքը, Կ. Պոլիս, 1910, էջ 9։

Վրեժներու հիդրան ենք փայփայելի,
Մենք, սարսափահա՞ր ու սարսափելի...^{1:}

Հաջորդ մենախոսությունների մեջ հերոսը դիմում է նաև աստծուն, որն իր «անհաս գահեն» լուռ և անտարբեր նայում է աշխարհի վրա կատարվող ոճիրներին։ Խենթը ատելության խոսքեր է ուղղում աստծուն, ուզում է տանջված մարդկության թուքը դրոշմել նրա ճակատին։ Բայց իգուր։

... Խեղճ հիմար։ Որո՞ւ կը խոսիմ փրփրա՞ծ։
Չէ՞ որ դոմ վաղո՞ւց մեռեց ես, Ասսրվա՞ծ։
Ու քու հսկայի դիակը անբա՞վ,
Գարշանքի ժահրո՞վն արյունաթաթավ,
Ապականե՞ր է երկնից անապակ
Ծիր-կաթիններուն երազն անհատակ...^{2:}

Պոեմի հաջորդ գլխում դարձյալ աղոտ ակնարկներից մենք իմանում ենք խենթացած հերոսի մի այլ հանդիպման մասին։ Նա տեսնում է նաև մի ժամանակ սիրած աղջկան, որն անշնչացած ընկել է անհամար դիակների հետ։ «Ահե՛ղ շրջանակ։ Զորս կողմը մեռել, մեջտեղը Սեր. մո՞ւթ արահետ անել»։

Պոեմն ավարտվում է մի այլաբանական պատկերով։ պառկած դիակների մեջ, խենթը հաղթահարվում է «երկաթե քնով» և տեսնում զարմանալի տեսիլներ՝ հին հայկական քաղաքների աշտարակ-

^{1:} Ռ. Սեակ. Կարմիր գիրքը, Կ. Պոլիս, 1910, էջ 14։

^{2:} Նույն տեղում, էջ 18—19։

ներ ու լուռ դանդակներ, փակված բերդեր և անթիվ տապանաքարեր։ Հետո երևում են հարյուր իշխաններ՝ «վահաննին ժանգոտ, բայց աշքերնին վես»։ Դա «ցեղին ուխտն է անդրշիրիմյան», որին ուզում է մասնակցել նաև խենթը՝ նոր օրերի ազգային սարսափիների վկան¹։

Եթե «Զարդի խենթը» սլոեմի ալուտ գծագրված սյուժեի վրա դգացվում է Բաֆֆու, Հատկապես «Զալալեղինի» և «Խենթի» որոշակի ազդեցությունը, ապա տեսարանների և պատկերավորության եղանակների մեջ ինչ-որ շափով առկա է «Դյուցազնորենի», «Հայորդիների», «Հոգեվարքի և հույսի ջահերի» հեղինակ Սիամանթոն՝ զարհուրանք ազդող, վրեժի ու ցասման կրքեր բորբոքող իր պատկերներով։ Ընդհանուր առմամբ «Զարդի խենթը» ստեղծագործական որոնումների արտահայտություն էր, գեղարվեստորեն դեռ լիովին շձկավորված, կառուցվածքի և լեզվի մի շարք ակնհայտ թերություններով։ Բավական անորոշ էին նաև պոեմի գաղափարական ելակետն ու եղրակացությունը։ Իզուր չէ, որ «Կարմիր գրքին առթիվ Արշակ Զոպանյանը Սևակին գրում էր. «Կրակ ունիք և ձիրք, բայց դեռ «պատրաստ չեք», շատ կարդալու, ոճերնիդ հղկելու—գրական զար-

¹ Պոեմի այս վերջին հատվածը որոշ հղկումներով և «Ռւխտին թափորը» վերնագրով, իբրև առանձին բանաստեղծություն, մի քանի տարի անց տպագրվեց նաև 1915 թ. «Ամենուն տարեցույցի» մեջ։

գացումնիդ կրթելու պետք ունիք. մի՛ աճապարեք. շատ գոեք. ատեն շատ ունիք. երիտասարդ եք. օր մը անշուշտ ավելի կատարյալ պիտի գոեք»¹:

Անկասկած, ինքը՝ գեղարվեստական կատարելության ձգտող բանաստեղծն էլ շուտով արդեն չէր կարող գոհ լինել իր գրքի որոշ կողմերից: Ինչպես Հիշում է ժամանակակիցներից մեկը, մի որոշ ժամանակ անց Սևակն արդեն «չէր հավներ» «Կարմիր գրքի» մեջ զետեղված գործերը՝ նախ և առաջ գեղարվեստական նկատառումներով²:

«Թրքուհին» փոքրիկ պոեմը³, որն ունի «Գեղջուկ եղերերգ» ենթավերնագիրը, պատմում է վայրաբարո բեկի կողմից առևանգված հայ աղջրկա մասին: Նա սարերում եղնիկ էր արածացնում, երբ բեկի մարդիկ փախցրին նրան, հետո բռնի թուրքացրին: Մի որոշ ժամանակ անց բեկը սպանում է աղջկա եղբորը, որը կովում էր բռնակալների դեմ: Տեսնելով և ճանաշելով սպանված եղբոր գլուխը, խելակորույս աղջիկը դաշույնով ըսպանում է բեկին և ինքն էլ վերջ տալիս իր կյանքին: Այս դեպքերի մասին մենք իմանում ենք միայն շատ ժլատ հիշատակություններից: Ավելի մեծ տեղ են գրավում քնարական երգերն ու դի-

¹ ԳԱԹ, Ռ. Սևակի ֆանդ:

² Մ. Պարսամյան. Մեր ազգային վերջին մեծ մարտիրոսները. Ռուբեն Զիլինկիրյան. «Շանթ», 1918, № 2, էջ 17.

³ Ռ. Սևակ. Կարմիր գիրքը, էջ 29—36.

մումները, որոնք գեղարվեստական ազդեցիկ ուժի
չեն հասել:

Ինչպես արդեն ասվեց, Հայրենիքին նվիրված
իր ստեղծագործությունների ժողովածուն Սևակը
մտադիր էր անվանել «Վերջին Հայերը»։ Այս վեր-
նագիրն արտացոլում էր Հայաստանի ճակատա-
գրի վերաբերյալ բանաստեղծի ողբերգական խոր-
հրդածությունները, այն, ինչ Վահան Տերյանը
նույն տարիներին արտահայտեց իր Հայտնի Հար-
ցով. «Միթե վերջին պոետն եմ ես, վերջին եր-
գիշն իմ երկրի»։ Միթե ժամանակակից Հայերին
վիճակված է լինելու աշխարհի հնագույն ազգերից
մեկի վերջին սերունդը,— մտածում էր Ռուբեն
Սևակը։ Եվ բանաստեղծի մտապատկերներում
գալիս-խառնվում էին ազգային պատմության հե-
րոսական ու ողբերգական էջերը, ներկայի զար-
հուրելի տեսարաններն ու ապագայի աղոտ կան-
խագուշակումները։ Պատահական չէ, որ Սևակը
գրում է իրար հետ սերտորեն կապված երկու մեծ
քերթված՝ «Առաջին Հայերը» և «Վերջին Հայերը»։
Դրանք նույն ընդհանուր մտահղացման երկու
մասերն են. բանաստեղծն ասեք ուզում է ներկա-
յացնել Հայ ժողովրդի Հազարամյակների պատ-
մության երկու ծայրերը՝ արշալույսն ու վերջալույ-
սը։ Դժբախտաբար, այդ կարևոր մտահղացումը
ավարտուն տեսք չի ստացել և ընթերցող շրջան-
ներին անծանոթ է։ «Առաջին Հայերը» սևագիր
վիճակում մինչև այժմ մնում է անտիպ, իսկ

«Վերջին հայերից» միայն հատվածներ են տպա-
գրվել:

Հայ ժողովրդի կյանքի օրհասական պահին
Սևակը դիմում էր նրա պատմության հնագույն
դյուցազնական շրջանին, աշխատում էր կյանքի
կոշել այն ժամանակները, երբ պատմական թա-
տերաբեմ էր իշխում մեր ժողովուրդը՝ ապրելու և
հաղթելու անսպառ կամքով լեցուն.

Առջևեն կերթար նահապետը Հայկ
Ու լուսնյակին տակ—Հայաստանի ցայդ
Հազար-հազարներ անդեն, անզրահ
Կիշնեփն գետին պես ալրագահոս,
Դեռ վես, դեռ հպարտ ու դեռ հեթանոս
Նախնի Հայերը...¹,

Այնուհետև բանաստեղծի աշքի առջևով անց-
նում են Հայաստանի պատմության այլ շրջաններ,
որ նա փորձում է ներկայացնել ազատության հա-
մար մղված դարավոր պայքարի դիրքերից: «Ա-
ռաջին հայերի» գաղափարական ելակետն ու նպա-
տակակետը միանգամայն պարզ էին՝ ոգեշնչել
ժամանակակիցներին անցյալի պատմության հե-
րոսական դրվագներով: Ավետիք իսահակյանի նը-
ման, որը համաշխարհային պատերազմի ժամա-
նակ գրեց «Մեր նախահայրերը» (1917թ.), «առա-
ջին հայերի» ուժի, կորովի և ապրելու մեծ կամքի
մասին պատմող այդ դյուցազներգությունը: Պատ-
մությունն արդիականությանը ծառայեցնելու մի-

¹ ԳԱԹ, Ռ. Սևակի ֆոնդ:

տումն ակնհայտ է նաև Սևակի «Հայ զատիկը» ավանդավեպում։ Նոյ նահապետին կյանքի վերսկսումն ազդարարող աղավնու պատկերն այստեղ իմաստավորվում է նորովի՝ իբրև հայ ժողովրդը վերածնության խորհրդանիշ, կապվում է Վահագնի դիցաբանական կերպարի հետ¹։

«Վերջին հայերը» ներկայացնում էր հայ ժողովրդի ժամանակակից վիճակը՝ աշխարհով մեկ ցրված, անհայրենիք ու հալածական, ազգային միասնությունից զուրկ և կործանման եզրին կանգնած։ Սևակն ազդեցիկ գծերով է սլատկերել գաղթական հայերի վիճակը, հայրենիքի այրող կարոտը, որն ստիպում է նույնիսկ ուրախության պահերին լալ ու տանջվել, հիշելով լքված հայրենի գյուղակներն ու տները։ Եվ երգում են պանդուխտ հայերն իրենց վիրավոր սրտերի խորքերից։

Հարս ունինք, մեզի հարսնեվոր չիկա...;
Սուգ ունինք, մեզի սգավոր չիկա...;
Ո՞ր մեղքին համար, ո՞վ է անիծեր
Հինգ հազար տարվան այս խեղճ ազգը ծեր...;
Չորս միլիոնին մեկ ապաստան չիկա,
«Յարիճան, հայ կա՝ Հայություն չիկա...»;
Կերգին Հայերը...;

Մի տիրական, հարատև, անլոելի կարուտ է թևածում այս քերթվածի վրա՝ աշխարհով մեկ ցրված պանդուխտ հայերի հայրենաբաղձ կա-

¹ «Դիցաբան», գիրք Ա., Պուրուշ, 1923, էջ 17—20։

րոտը։ Ու ինչքան էլ ավեր, անշուք ու տիրաբեր
են հայրենի աշխարհի պատկերները, նրանք լի
են բանաստեղծական բովանդակությամբ, որը
ողողում է աստանդական հայերի սրտերը, մի
անդիմադրելի ուժով մղում դեպի ավանդական
հայրենիքը.

Տեսա՞ր դուն մեռած գյուղերն անխռով,
Հյուղերը փլած՝ կարմի՞ր պատերով,
Հողմաղացքներ լուռ թևերով կոտրած,
Շերուկ դիակներ սարին վրա կորա՞ծ,
Մատուռնին ավե՞ր, զրկըլած խունկե...
Ա'խ, հո՞ն է, հո՞ն մեր հայրենիքն, հոնկե՞
Կուղան Հայերը...:
Օտա՞ր, տեսա՞ր դուն աղբյուրները զո՞վ,
Գեղջուկ այգիները դա՞զը ողկուզզով...
Դեռ կը մխա՞ցած տանիքն հայրենի,
Դեռ կծաղկի՞ հոն թուփը վարդենի.
Դեռ կերդե՞ այդ հի՞ն պլառովը ցայգին...
Հո՞ն, հո՞ն կերաղեն, կուղան տիրագին
Աքսոր Հայերը...¹:

Բնորոշ է, սակայն, որ Սևակն իր խոսքն ա-
վարտում է լավատեսական շեշտերով, ժողովրդի
և հայրենիքի հարատևման բուռն հավատով։ «Ո՛չ
ո՛չ։ Արշալույսն իրենց պիտի գա», — գրում է բա-
նաստեղծը, հավաստելով ժողովրդի մեծ և փառա-
վոր ուղին ապագայում։

Սևակի հայրենասիրական երկերում ժողովրդի
հակատագրի և գալիք հեռանկարների արծար-

¹ «Ծանթ», 1918, № 2, լշ 19:

ծումները երբեք չեն դառնում վերացական քաղաքական դատողություններ։ Միշտ առկա է բանաստեղծի անձնական հույզը, հիշողությունը, սպասումը։ Այսպես, «Վերջին հայերը» քերթվածում բանաստեղծի թախծոտ, կարոտագին հարցերը ծըխացող հայրենի տանիքի, ծաղկող վարդենու կամ երգող թոշունի մասին՝ մի առանձին սրտակցություն են տալիս պոետի խոսքին։ Քնարական հերոսի կարոտը, հայրենիք վերադառնալու երազանքը դառնում են աշխարհով մեկ ցրված հայերի հայրենաբաղծության ազդեցիկ խորհրդանիշը։ Կարոտ, որը, ի դեպ, լավ է արտահայտվել նաև մի ուրիշ բանաստեղծության մեջ («Ճամփո՛րդ»)։ Ահա այդ բանաստեղծության սկիզբն ու վերջը։

Ճամփո՛րդ, անցա՞ր դու այն գեղե հեռավոր,
Որ ժայռերու սերտիվ կառչած վես կուրծքին՝
Իր հնավանդ պարիսպներուն դարավոր
Կը դիտե շուքը ծովուն մեջ տրտմագին.
Ճամփո՛րդ, անցա՞ր դու այն գեղե հեռավոր։
...Տարիներով կարո՞տն ունիմ սիրագին
Այդ հողերուն, աղբյուրներուն մեղմ հոսուն,
Գերեզմանին, անբառ ծովին, լուսնակին,
Ու ժայռերուն, որ իմ ծնիլըս տեսան...
Կարմիր կարոտ ունիմ, կարոտ սիրագին¹։

«Վերջին հայերը» և համանման տրամադրություններ արտահայտող մյուս բանաստեղծությունները ծնվել են ազգահավաքման և հայրենիքի վե-

¹ ԳԱԹ, Ռ. Սևակի ֆոնդ։

րականգնման մեծ երազանքից։ Ուղարկելով իր այդ քերթվածը «Ամենուն տարեցույցի» հրատարակիչ Թեոդիկին, 1910 թ. մի նամակում բանաստեղծն այսպես էր բացատրում նրա իմաստն ու նպատակը. «Ճանացի «Ազատ Հայուն փոքրիկ հանրագիտարանին» մեջ բացատրել ստրուկ Հայուն մեծ վերքերը։ Աշխատեցա հոն ցուցադրել «նախասահմանադրական» շրջանի մեր գաղթական հայուն հոգին՝ իր բոլոր լացնող պարզությանը մեջ։ Չեմ գիտեր թե հաջողեցա։ ամեն պարագայի մեջ կը հուսամ որ հրատարակությունն օգտակար կը լա՝ ժողովուրդը արտագաղթե զգուշացնելու տեսակետեն»¹։ Մի քանի ամիս անց գրած մի ուրիշ նամակում բանաստեղծը գոհունակությամբ նշում էր, որ «Վերջին հայերը» քերթվածը լավ է ընդունվել Պոլսում, իսկ Եգիպտոսում «գտեր է խանդավառության ցույցեր»²։

Պատահական չէ, որ 20-րդ դարի սկզբի հայ գրականության, մասնավորապես նրա արևմտյան հատվածի մեջ այնքան ուժեղ էր արտահայտվում հայրենաբաղձության թեման, արտագաղթի կործանարար հետևանքների միտքը։ Փլուզվող ու դատարկվող հայրենիքի պատկերն ստիպում էր հընչեցնելու ազնիվ տագնապի երգը, հոշակելու հայրենի դաշտերի ծաղկեցման, գյուղերի ու քաղաքների շենացման բանաստեղծական կոչը։ Այդպես

¹ Թեոդիկ. Ամենուն տարեցույցը, 1916—1920, լշ 21։

² Նույն տեղում, լշ 22։

ծնվեց արևմտահայ պոեզիայի ամենահզոր և վա-
րակիչ էջերից մեկը՝ Սիամանթոյի «Հայրենի հը-
րավեր» բանաստեղծական շարքը և ուրիշ գործերու
նշված ստեղծագործություններով Ռուբեն Սևակն
էլ ձայնակցում էր իր գրչակից ընկերներին, նը-
րանց արտահայտած հայրենաբաղադ կարոտին:
Կարդալով «Վերջին հայեր» կամ «Ճամփո՞րդ»
բանաստեղծությունների վկայակոչված տողերու,
իսկույն հիշում ես, օրինակ, Սիամանթոյի «Ափ
մը մոխիր՝ հայրենի տուն...» հոյակապ բանաս-
տեղծությունը (թեև մեր խոսքը չի վերաբերում
գեղարվեստական ուժի և կատարելության համա-
զորությանը): Ինչպե՞ս շմտաբերել.

Արցունքո՞վ, արցունքո՞վ լսեցի որ ավերակ, ավերակ,
Քու լայնանիստ պատերդ իրարու վրա կործանեցին,
Աարսափի օր մը, կոտորածի օր մը, օր մը արյունի...
Զքեզ եզերող պարտեզիդ ծաղկընելուն վրա:

...Ու բակին մեջ երգող պղբյուրը մեռա՞վ,
Ու կոտրտեցա՞ն պարտեզիս ուռին և թթւնին,
Եվ այն առվակը, որ ծառերուն մեջեն կը հոսեր,
Յամքեցա՞վ, ըսի՛, ո՞ւր է, ցամքեցա՞վ, ցամքեցա՞վ...

Այս նմանությունը, իհարկե, ամենից առաջ
արդյունք էր ոչ թե գրական աղղեցության, այլ
համանման կենսական պայմանների, ցավերի ու
երազների: Դա հարազատ ժողովրդի ողբերգու-
թյան, հայրենակարոտ մտորումների և վերածնու-
թյան մեջ տենչանքի բանաստեղծական արտա-
հայտությունն էր:

Յ

Ուրբեն Սևակը սոցիալական հակասությունների սուր զգացողություն ունեցող բանաստեղծէր։ Նրա միտքն զբաղվում է ժամանակակից հասարակության մեջ տիրող հարաբերությունների և օրենքների քննությամբ, ինչպես և ավելի ընդհանուր հարցերով՝ մարդու և բնության, կյանքի և մահվան փոխհարաբերության հավերժական, բայց միշտ նոր խնդիրներով։

Իր ժամանակի արևմտահայ, ինչպես նաև արևելահայ գրողների շարքում Սևակը մեկն էր նրանցից, ովքեր առավել խորությամբ հասկանում էին բուրժուական հասարակարգի անարդարացի և հակամարդկային բնույթը, հետևողական և անհաշտ քննադատության էին ենթարկում կյանքում կատարվող բարոյական ավերածությունները։ «Քառոր» ընդհանուր խորագրի տակ նա, ինչպես ասվեց, մտադիր էր հավաքել իր այն գործերը, որոնք ներկայացնում են բուրժուական քառային իրականության գեղարվեստական պատկերը։ Մե հասարակություն, որի մասին նա դառնությամբ

գրել է մի նամակում. «Հացը աշխատողինը չէ հիմա, հացը գողցողինն է. ու մեռնողին իրավունքը մեղքնողեն հարցնելը՝ եղերական անմտություն մըն է, ափսո՞ս»¹:

Սոցիալական հակասությունների համարձակ ցուցադրման առումով Սևակի ստեղծագործությունը արևմտահայ գրականության մեջ կարող է համեմատվել միայն Դանիել Վարուժանի «Գողգոթայի ծաղիկների» մեջ պրոլետարիատի կյանքի, տառապանքների ու պայքարի բանաստեղծական պատկերների հետ։ Այն փաստը, որ հատկապես Վարուժանն ու Սևակն են դարասկզբի արևմտահայ պոեզիայի մեջ սուր հետաքրքրություն հանդես բերում դեպի սոցիալական պայքարի՝ հարցերը, կապված էր, անշուշտ, նաև այն հանգամանքի հետ, որ նրանք երկար ժամանակ ապրեցին Արևմտյան Եվրոպայի երկրներում, ուր կարող էին դիտել հասարակության ներքին բախումների շատ ավելի զարգացած ձևեր, քան հնարավոր էր սութանական թուրքիայում։ Արևմուտքը ներկայացավ Սևակին իր դաժան ու խեղդիչ մթնոլորտով, բուրժուական «քաղաքակրթության» անհաշիվ ավերիչ հետևանքներով։ Այդ մասին է, որ բանաստեղծը գրում էր «Մարդերգություն» պոեմի ըսկըզբում, բնութագրելով «շատ քաղաքակիրթ» Արևմուտքը իբրև մի իրականություն,

¹ Թեոդիկ. Ամենուն տարեցույցը, 1916—1920, լ. 21:

Ուր խիղճը բառ մ'է, մարդը՝ մեքենա.
Աշխարհ գործարան մ'անխոնջ, անխընա.
Սերը հաշիվ մ'է. կրոնքը՝ դրամ.
Երջանկությունը՝ ձանձրալի մի տուամ.
Մահն՝ անմտություն. կյանքն՝ անհաշտ մի կռիվ...

«Մարդերգություն» պոեմը, որը գրվել է 1909թ. կողանում և զետեղվել «Կարմիր գրքի» մեջ, այսպես կոչված, համամարդկային թեմաներով Սեվակի կերտած ամենախոշոր երկն է։ Դա մի ինքնատիպ բանաստեղծական մտահղացում է՝ երգ մարդու մասին, ժամանակակից հասարակության մեջ նրա կյանքի ու ճակատագրի վերաբերյալ։ Խոհական-փիլիսոփայական այս պոեմում արտաքին սյուժետային որոշ ազդակ է հանդիսանում հայրենի գյուղ կատարած այցելությունը, ուր կյանքի առանձին փաստերը բանաստեղծի համար առիթ են դառնում քննելու մարդկային կյանքի իմաստը, հասարակության անցյալը, ներկան և ապագայն հեռանկարները։ Այս դեպքում էլ Սևակի նախընտրածը պոեմի քնարական ձևն է, որը հնարավորություն է տալիս արտաքին մի շարժառիթի, դեպքի տպավորության տակ աղատորեն ծավալվելու, ընթերցողին մտցնելու խոհերի և զգացմունքների մի լայն ասպարեզ։ Քնարականությունը գերիշխող է, ինչպես կտեսնենք, նաև Սևակի, այսպես կոչված, «փոքր պոեմներում» («Այս դանակը», «Փողոց ավլողը» և այլն):

«Մարդերգությունն» ունի երեք մտս՝ հետևյալ

վերնագրերով. «Գյուղական եկեղեցին մեջ.— Ծնունդը», «Գյուղական ճամփուն վրա.— Կյանքը», «Գյուղական գերեզմանատան մեջ.— Մահը»։ Մարդու ուղին ծնունդից մինչև մահ ժամանակակից հասարակության մեջ,— այս է պոեմի նյութը։ Գեղարվեստորեն անբասիր չէ ընտրված թեմայի կատարումը, բայց երկն ուշագրավ է իբրև ստեղծագործական մի խիզախ ծրագիր։

Ահա պոեմի առաջին մասը. գյուղական եկեղեցի կատարած այցելությունը առիթ է դարձել խորհրդածելու աշխարհի հավերժության ու մարդկային կյանքի անցողիկության մասին։ Սակայն շուտով բանաստեղծի խոհերը ձեռք են բերում ավելի կոնկրետ-կենսական գծեր։ Ահա եկեղեցի են բերել կնքելու երկու երեխա՝ մեկը հարուստի, մյուսը աղքատի։ Երկու թափորների տարբերությունը բնութագրվում է ֆրիկյան պատկերներով։ Մեկն ընկղմված է բեհեղյա շորերում ու ժանյակներում, մյուսը փաթաթված է ձորձերի մեջ։ Կյանքի անարդարություններն սկսվում են ծննդյան օրից, սկզբից ևեթ նախորոշված է երկու մանուկների ուղին։ Մեկին վիճակված է տեր լինելու, մյուսին՝ ստրուկ։ Խորհելով կյանքի այս անհեթեթ կարգի մասին, բանաստեղծը կանխատեսում և արդարացնում է ճնշվածների ասլագա հաշվեհարդարը տիրողների նկատմամբ։ Նա մտքի աշքով տեսնում է՝

Բյուր կախաղաններ անգութ մեծերու...

Ու հրդեհներու մեջ հետվե հեռու

Սարումբերու կո՞ւռ, բարբարո՞ս գունդեթ,
Որ տաճա՞ր, աստվա՛ծ, կո՞ւռք, իշխա՞ն ու տե՛ր
Տապալելով վար, կ'երթային հեռո՞ւ
Հավասարության սե՛րմը ցանելու,
Ու լա՞յն բաշխելու Արդարությո՞ւն, հա՞ց...

Պոեմի հաջորդ մասերում բանաստեղծի խորհրդածությունները պատվում են համաշխարհային պատմության, կյանքի ու մահվան ընդհանուր հարցերի շուրջը։ Կանգնած գյուղական ճանապարհի մոտ, բանաստեղծը կարծես լսում է այդ ճանապարհով անցած անհամար սերունդների քայլերի դոփյունը, տեսնում ցեղերի և ազգերի երթը հազարամյակների մեջ։ Ամենուր բանաստեղծի հայացքը ներկայի իրերից ձգտում է թափանցել հեռավոր անցյալի գաղտնիքները։ Ահա նա վերցրել է ճանապարհի վրայից «ափ մը փոշի»։ Բայց նրա համար դա սովորական փոշի չէ։ Նա տեսնում է «ի՞նչ ազգեր, կյանքեր այդ փոշիին մեջ, ի՞նչ արյան լիճեր, քանի՞ ոսկորներ»։ Պոետը մտքի աշքով պատկերացնում է մարդու ամբողջ ուղին քարանձավի բնակչից մինչև ժամանակակից աշխարհը։ Իսկ այսօրվա աշխարհում նա տեսնում է սովի դատապարտված «Աշխատությանը» և «միապետ Դրամին», որն իշխում է ամեն ինչի վրա։ Խորհելով բիրտ ուժի և «հտպիտ օրենքի» ստեղծած անհամար անարդարությունների մասին, բանաստեղծն իր քայլերն ուղղում է այնտեղ, ուր բոլոր մարդկանց միանման ապագա է սպասում՝ «Հավասարության դաշտը—Գերեզման...»։

Կյուղական գերեզմանատուն... Այստեղ ամենին ինչ տրամադրում է մտածելու մահվան ամենապարսպիան մտախն, նորից ու նորից հիշեցնում է, որ լուսնի տակ յուրաքանչյուր կենդանի էակ ենթակա է կործանման ու մահվան: Եվ հոգու անմահության ոչ մի սին խոստում չի կարող փոխել այդ դաժան ճշմարտությունը.

Ընկողմած ծոցն այդ Մահվան քաղաքին,
Զոր խորհեցա թե անմահ էր հողին....
Անմահ. բայց չէ՞ որ երկնից մեջ գարնան
Բյուր զիսավորներ մոխիր կը դառնան.
Աստղեր կը վառին, աստղեր կը սառչին.
Կը լոե ցայգին պլաստը վերջին,
Բույս ու կենդանի կ'իյնան անկենդան.
Ամեն, ամեն բան մահվան զոհ կ'երթան...

Սևակը բանաստեղծորեն արտահայտել է կյանքի, գոյության հավերժական հակասությունը. ամեն ինչ դատապարտված է մահվան, բայց և ձգտում է ապրել ու ապրել, պայքարով է խլում կյանքի ամեն մի վայրկյանը: Ե'վ մեկը, և' մյուսը բնության մշտահոլով կյանքի բնական արտահայտություններն են: Բնության հետ ձուլվելու, նրա մի մասնիկը դառնալու մեջ է որոնում մարդը անմահանալու և հավերժանալու միակ ուղին.

Ա՛խ, անմահ ըլլալ... Ապրիլ հավիտյան.
Իսպառ շունենալ ո՛չ դար, ո՛չ վայրկյան.
Ժամանակին պես, ժամանակին մեջ,
Տքա՛լ, տառապի՛լ, բայց ապրի՛լ անվերջ....
...Եյուղ մ'ըլլալ մարգի, իր մը լռելյայն,
Բայց հավիտենին մեջ ապրի՛լ միայն....

Բայց ի վերջո ամեն ինչ պարտվում է ամենազոր մահից, ենթարկվում կործանման և ոչընշացման օրենքին։ Ամենուր է հասնում մահվան իշխանությունը. «Ես սկիզբ և վերջ, երա՛խ ու արգանդ, ես վի՛ճ անհատակ ու ծոց արգավանդ... ինձ Աստված ըսին, իմ անունս է Մա՛հ...»։ Այս համոզմունքը որոշ հոռետեսական երանգ է տալիս պոեմի վերջավորությանը, մի բան, որ ինչոր շափով հատուկ է Սևակի մտածողությանը, մանավանդ երբ նա խորհրդածում է մահվան մասին։

Առհասարակ, Սևակի շատ գործերի համար բնորոշ է կյանքի անմիջական դրսեորումներից վերքարձրանալու, նրա ներքին մեծ խորհրդին, բնության հավերժական շարժմանը հաղորդակից դառնալու ձգտումը, այն, ինչ Հովհ. Թումանյանը կոչում էր «տիեզերական մեծ կյանքով» ապրելու ծարավ։ Սևակն էլ հաճախ հուզվել է կյանքի ու մահվան առեղծվածներով, ապրել է, 1908 թ. իր մի նամակի խոսքերով ասած, «տարօրինակ, առնելի զգացումը մեծ անհունին մեջ լուծվելու, անէանալու, մեռնելու»¹։ Այդ պանթեիստական խոհերը կազմում են նրա աշխարհզգացողության և պոեզիայի բնորոշ կողմերից մեկը։ Այդ առումով կարեոր է նաև 1912 թ. գրած մեզ արդեն ծանոթ նամակը, ուր բանաստեղծը մի անսքող թախծով խոսում է կյանքի առօրյա ընթացքից կտրվելու,

¹ Թեոդիկ. Ամենուն տարեցույցը, 1928, էջ 369.

առանձնության մեջ մեծ խոհերով ու տենչերով՝
ապրելու բուռն ցանկության մասին. «Կոան Սեն
Պեռնառ անուն վանք մը կա Ալպյանց գագաթը,
ձյուներուն ու լոռության մեջ կորսված, երկինքին
ու երկրին մեջ առկախ, ժամանակին պես դարա-
վոր ու մահվան պես անխախտ։ Քանի՛ քանի՛
անգամներ երազած եմ հոն քաշվիլ, հոն թողվիլ,
բանտարկվիլ իմ երջանկության հետ, դո՛ւրս նետ-
վիլ այս զգվելի Օրենքեն որ «կյանքի պայքար»
կը կոչվի, ապրիլ երազին ու խորհուրդին մեջ,
աստվածորեն ապրիլ, հավիտենության խարկան-
քըն ունենալ, լոռությունը խոսեցնել... Ինձ այնպես
կոսդա, որ հոն բնության մենության մեջ ժամա-
նակի ձայնը պիտի լսեի, և թե հոգիները, որոնք
օդի մեջ են, այո՛, պիտի խոսեին ինձ հսկայական
բաներ, Մովսեսին լսած պատգամներուն պես։ Եզ
այն ատեն պիտի զգայի, որ կ'ապրիմ, մինչդեռ
հիմա՝ քաղաքակրթության ու խուժանին մեջ նետ-
ված՝ ավելի կը տարվիմ, կը քշվիմ, կը հրվիմ.
քան թե կը քալեմ Բնության մեջ, հին հսկաներու
քայլովը»¹։

Այսպիսի խոհերով են տոգորված նաև Սևակի
«Մարդերգությունը» և նրա ուրիշ գործեր։ Սևակը
մեղ ներկայանում է իբրև փիլիսոփայող բանաս-
տեղծ, որին մոտ ու հասկանալի են գոյության ա-
մենաբարդ հարցերը, որին մշտապես զբաղեցնում

¹ Թեոդիկ. Ամենում տարեցույցը, 1928, էջ 368—369։

է, նրա բանաստեղծություններից մեկի բառերով
ասած, «Տիեզերքի մեծ ինչո՞ւն»:

Բանաստեղծը ողբերգական տրամադրությամբ
է խորհում բնության գեղեցկությունների և մարդ-
կային կյանքի անկատարության, այլանդակ կող-
մերի հակադրության մասին: «Մեծդ Աստված»
բանաստեղծությունն աշքի է ընկնում ընդգրկում-
ների վիթխարի լայնությամբ: Երկրագնդի ջրերը՝
հեղորեն սահող առվակից մինչև գահավիժող ջըր-
վեժներն ու մթին օվկիանոները, անապատներն ու
անտառները, անդնդախոր ձորերն ու երկնասույր
լեռները, կապտագեղ երկինքն իր անեզր տարա-
ծություններով, «տրտմանույշ վերջալույսներով»
ու «կենսալիր արշալույսներով»,— այս բոլորը
սեղմ, սակայն տպավորիչ գծագրումներ են ստա-
ցել: Բայց այդ վեհաշշուք պատկերների լիակատար
հակադրությունն է մարդը, որն իր կարճատե կյան-
քում քայլում է անվերջ դժբախտությունների տակ
ընկճված, արատների և փոխադարձ շարիքների
միջով, աղարտելով բնության գեղեցկությունն ու
մաքրությունը.

Ահա' մարդերդ: Ահա' Մարդերդ ալ, Աստված,
Տխուր հյուրերն այս հրաշագեղ աշխարհքին,
Թափառական վաղորդյանեն ընկճված,
Ճղճիմ, թշվառ, հողին կառշած տիրաղին:

Ճակատագրին մտրակին տակ խելահեղ,
Յնոնք կուլան ու կը վազեն մտացիր,
— Իրենց ճակտին վրա Մահվան գիրն ահեղ—
Յնոնք զոր դուն պատկերիդ վրա ձեւցիր...

Մի խոր թախիծ կա այս բանաստեղծության մեջ, և դրա աղբյուրը բնության ու մարդկային կյանքի աններդաշնակության ցավագին գիտակցությունն է։ Իր այս մտորումներով Սևակը յուրովի արձագանքում էր բնության մեծությանը և գեղեցկությանը արժանի մարդկային բարձր կերպարի երազանքին, որը պոեզիայի ամենախոր թեմաներից մեկն է եղել։ Հայ գրականության մեջ այդ թեման շատ բնորոշ էր, օրինակ, Հովհ. Թումանյանի Համար և առանձին ուժով արտահայտվեց, մանավանդ, 1915 թ. գրած «Բարձրից» բանաստեղծության մեջ։ Ինչի՞ մասին է խոսում այստեղ Թումանյանը։ Մի պահ առօրյա աղմուկից վերացած բանաստեղծի «Հզոր Հոգին» նայում է վերից բովանդակ աշխարհին՝ այնտեղ իր մարդասիրական խոհերի, համընդհանուր սիրո և երջանկության տենչերի իրագործումը տեսնելու ցանկությամբ։ Եվ նա տեսնում է. գեղեցիկ է բնությունը, բայց ամենուր աղարտվում է անհամար ոճիրներով, ցավերով ու թշնամանքով, իսկ մարդկային կյանքը մի համատարած դժոխք է.

Տեսավ աշխարհքը՝ գեղեցիկ, անվերջ
Եվ հայրենիքներն անձուկ նըրա մեջ,
Եվ աստվածները նըրանց զանազան,
Եվ սրբերը խիստ, խըտրող ու դաժան։
Տեսավ՝ ուտում են ամենքն ամենքին,
Ամեն հայրենիք իրեն զավակին,
Եվ իր պաշտողին՝ ամեն մի աստված,
Եվ կյանքը տանջանք, ցավ համատարած։

Ու ոչ մի երկիր շըկա հանգշելու—
Խոր, արարշական հանգիստն անխըռով,
Ու ոչ մի անկյուն շըկա շընշելու
Շունչն աստվածային՝ լի անվիրջ սիրով...

Թումանյանի, Մեծարենցի, Սևակի և դարա-
սկզբի մեր մյուս բանաստեղծների բնապաշտա-
կան խոհերում անուղղակի արտացոլվում էին
հասարակական իդեալի որոնումները, որոնք բախ-
վում էին ժամանակի հակասություններին, մղում
էին բնության գեղեցկության մեջ մատնանշելու
մարդկային կյանքի կատարելության շափանիշնե-
րը։ Բնության և մարդու հակաղորության ցավագին
ըմբռնումը բխում էր դրանց ներդաշնակության
բարձր պատկերացումից։

Ի՞րոք ն Սևակն ունի նաև բանաստեղծություն-
ներ, որոնք շատ ավելի իրական, անմիջական գը-
ծերով են պատկերում ժամանակակից հասարա-
կությունը՝ իր սոցիալական կյանքի «քառսով»։
Բանաստեղծը նկարագրում է կյանքի կարիքից
բարոյական անկման հասած կանանց դառը ճա-
կատագիրը («Պոլսո որովայնին մեջ», «Պոռնիկը»),
անեծքով նշավակում է դրամի այլասերող ու կոր-
ծանող ուժը («Դրամին աղոթքը»)։ Ուկու շարագու-
շակ ցոլքի մեջ նա տեսնում է արտացոլված «ճա-
կատագիրը տառապող մարդկության», տեսնում է
աղքատ մայրերի արցունքուտ հայացքներն ու
սովահար որբ երեխաների վեր կարկառած նիհար

Ճեռքերը։ Դրամի կեղծարար ուժի հետ է նա կապում մարդու բարոյական անկումը։

Մարդն, տուաջին այն մարդը որ տեհնչտվար
Պիղեց, խուզեց հողին արդանդը խավար,
Ու շարանենդ թագստոցեդ դարավոր
Խըլեց դրեզ, հղկեց, մաքրեց փառավոր,
Այն մարդը, վա՞խ, ժանա ցուքերուդ մեջ ժպտոն
Չը նշմարե՞ց տիսուր անկումը Մարդուն։

Հասարակության սոցիալական հակասությունները պատկերելիս Սևակը հաճախ դուրս է գալիս «զուտ քնարական» ապրումների շրջանակից, դիմում է կյանքի արտացոլման ավելի «օբյեկտիվ» ձևերին։ Նա ընտրում է սյուժետային ընդարձակ բանաստեղծության տեսակը, որը որոշ իմաստով կարելի է անվանել «փոքրիկ պոեմ» («Այս դանակը», «Փողոց ավլողը», «Կարմիր դրոշակը», «Շան հոգի» և այլն)։ Այս գործերը ներշնչված են ամենից առաջ եվրոպական իրականության մեջ դիտած պրոլետարական կյանքի ու պայքարի իրողություններով։

Ահա «Կարմիր դրոշակը»։ Ճմեռվա ցրտի և ձյունի մեջ փողոց է դուրս եկել «անոթիներու, անգործներու կուռ բանակը», և ամենուր տարածվում են «ի կոհ՝ վ, ի զե՞ն» կոչերն ու ամբոխի միալար աղաղակը. «Հա՞ց, հա՞ց, հա՞ց...»։ Դա ծայր աստիճանի թշվառության հասած աշխատավորական բաղմությունն է («խեղճ ու վես, կուտված, կատղած, մրջյուններու շեղջի պես»,—

այսպես է բնութագրվում ցուցարարների բազմությունը): Իսկ շուրջը դիշերային սառնամանիքն է՝ դաժան, թշնամական, ամեն տեղ թափանցող.

Ցո՞ւրտ, իրենց վրա դանդա՞ղ կիշնե ձյունն համակ,
Անհուսության ծաղիկներու պես ճերմակ,
Ցո՞ւրտ, կը պատեր դիրենք դիշերն անսահմա՞..,
Թշվառության մթին դավի մը նման:

Սևակը իրական պատկերներով նկարագրում է թշվառության և տարերային ընդվզման տեսարանները, բանվորական աղմկոտ միտինգը: Մենք շոշափելիորեն կենդանի գծերով տեսնում ենք հավասարության ոգով կրակոտ ճառեր արտասանող «անուս դեմքերով» բանվորներին, քաղցից ու հուսահատությունից փայլող մարդկային հայացքները, դեպի վեր կարկառած ուկրոտ ձեռքերը: Եվ քայլում-քայլո՞ւմ են անթիվ ցուցարարները.

«Ո՞ւր, դեպի ո՞ւր... քաղցած կյանքեր համորե՞ն,
Իսպառ լքված աստվածներե՞ն, մարդերե՞ն,
Լուռ կերթային, խուլ բնազդի մը հլու,
Նոր օրենքի նոր նժար մը կերտելու...

Ու ինձ այնպես թվեցավ թե լսելլայն,
Ճակատագրին թեր կիշխեր իրենց վրան.—
Բայց կերթային անոնք. ի զե՞ն, ի պայքա՞ր,
Արդարության կը դիմեին խոնչ, տըկար,
Արդարություն, որ այս կերպո՞վ պիտի գար...

Բանաստեղծը խոր համակրանքով է պատկերում բանվորական սայշարի դրվագները: Նա հուսով ու սիրով է մտածում այն «նոր օրենքի նոր

նժամի» մասին, որի իրագործման համար քայլում են անանուն բազմությունները կյանքի տառասկոտ ուղիներով։

Սևակի դեմոկրատական լմբոնումների առումով հատկանշական է նաև «Այս դանակը» փոքրիկ պոեմը։ Գործազուրկ ծեր բանվորի և նրա սովահար լնտանիքի մասին է պատմում այս երկը։ Հաց խնդրող երեխաներին և կնոջը կերակրելու համար նա դիմում է հուսահատ քայլի։ Մթության մեջ հարձակվում է հարուստ գործարանատիրոջ վրա, որն ամեն ինչ թողնելով, փախչում է։ Բայց ազնիվ բանվորի համար դա հաղթանակ չէ։ Աշխատանքի մարդը չի կարող հաշտվել այն մտքի հետ, որ դանակի օգնությամբ պետք է ապահովի իր լնտանիքի ապրուստը։ Եվ այդ մտքից հուսահատ, նա ինքնասպանություն է գործում։

«Այս դանակը» շնչում է սոցիալական անարդարությունների մերկացման բուռն կրքով։ Ժամանակակից հասարակությանը Սևակը դատապարտում է հավասարության բնական սկզբունքը ոտնահարելու, հարստության և աղքատության բևեռներ ստեղծելու համար։

Ավա՞ղ, այն ամեն բաներն ապաքեն
Որ շնորհվեցան մեզի երկինքեն՝
Մարդկային օրենքն արգելեց մարդուն...
Եվ մարդն անոթի՝, ծարավա՞ծ, արթո՞ւն,
Երջանկության հորդ գետին քով՝ հըլո՞ւ
Կըմեռնի առանց ումալ մը ըմպելո՞ւ...

Տպավորիչ գծերով է ներկայացված ծեր բանվորի ընտանիքը՝ հասած հետին թշվառության. ցույց է տրված ազնիվ աշխատանքով ապրող մարդու բարոյական նկարագրի գեղեցկությունը:

Իհարկե, պոեմում սլատկերված բացառիկ դեպքը չէր կարող ներկայացնել պրոլետարական պայքարի ճշմարիտ պատկերը, քանի որ հերոսը հանդես է բերված միայնակ ու անհեռանկար վիճակում: Բայց այդ պատմությունը առիթ է դարձել արծարծելու «զրկված մարդկության» փրկության ուղիների հարցը, որը կազմում է պոեմի, հատկապես նրա վերջին մասի ներքին բովանդակությունը: Ինչպես հասնել հավասարության սկզբունքի հաղթանակին. արդյոք բոնության, թե՝ խաղաղ ճանապարհով՝ արդարության քարոզներով: Խորհելով այդ մասին, բանաստեղծը հստակ պատասխան չի տալիս առաջադրված հարցերին: Դիտելով իր մոտ պահվող դանակը, որ ժամանակին բանաստեղծը վերցրել է ինքնասպան եղած բանվորի մոտից, նա այդ դանակն անվանում է խորհրդանիշ «տառապո՛ղ, մեռնո՛ղ, այլ քաջ մարդկության» և «վերջին պաշտպան զրկված մարդուն»: Նա դրում է այն մասին, որ դանակի օգնությամբ կարելի է «արյան վրա հիմնել Օրենքըն ապագա»: այսինքն տեսնում է սոցիալական պայքարի նշանակությունն ու հնարավոր արդյունքները: Բայց պոեմի վերջում Սևակը գրում է և այն մասին, որ «դանակը» (այսինքն բոնի

պայքարը) հաճախ լուսմ է, սպասելով, «որ իսա-
դաղությամբ դա, արդարությամբ դա, դա տար-
վե տարի դրկված մարդկության երազը բարիա
Ո՞ր ուղին է ճշմարիտը. բանաստեղծն ինքն էլ երկ-
վության մեջ է և հաճախ տարբեր կերպ է պատ-
կերացնում հարցը:

«Այս դանակը» տոկադրվել է 1909 թ., իսկ
միաժամանակ կամ դրանից հետո հրապարակված
մի շաբաթ գործերում,— «Կարմիր դրոշակը» (1909),
«Մարդերգություն» (1910), «Փողոց ավլողը»
(1911) և այլն,— բանաստեղծը շատ որոշակի և
համակրանքով սկսուելու է արդարության հա-
մար մղվող սոցիալական պայքարը, կանխա-
տեսելով ապագայում «բյուր կախաղաններ ան-
գութ մեծերու», հրդեհներ և պատերազմ։ Ենելով
այս փաստերից, կարծում ենք, պետք է միակող-
մանի համարել այն պնդումը, թե Ռ. Սևակն առ-
հասարակ անգիտանում է սոցիալական պայքարի
նշանակությունը և ամբողջովին փարում է հասա-
րակական նպատակներին աստիճանական, իսա-
դաղ գարգացմամբ հասնելու մտքին (այսպես է
սովորաբար ասվում մեր օրերում Սևակի մասին
գրված հատ ու կենտ հոդվածներում, հենվելով
բացառապես «Այս դանակը» պոեմի վերջին մա-
սի վրա): Ավելի ճիշտ կլինի խոսել բանաստեղծի
սոցիալական մտորումների երկվության, տարու-
բերումների մասին, որոնց պատճառը հստակ քա-
ղաքական աշխարհայացքի բացակայությունն էր:

Սևակի սյուժետային բանաստեղծություններն ու պոեմները զարգանում են հեղինակի կամ հեռուսների քնարական զեղումների ուղեկցությամբ։ Էականը նույնիսկ ոչ այնքան դեպքերի նկարագրությունն է; որքան սոցիալական իրողությունների ակտիվ գնահատականներով հագեցած այդ քնարական շեղումները։ Բացի նշված գործերից, այդ եղանակով է զարգանում նաև «Փողոց ավլողը» ծավալուն բանաստեղծությունը։ Այստեղ փաստորեն որևէ գործողություն չկա, այլ ներկայացվում է կյանքի մի պատկեր՝ դիտված կենսական հարաբերությունների լույսի տակ։ Փողոցի մայթերին օրվա բոլոր ժամերին աշխատում է կուցած հասակով ծերունին՝ մաքրում «մարդկությաց եխն ու կեղտն անվերջ»։ Այս պատկերը առիթ է դարձել խորհրդածելու կյանքի անարդարությունների մասին։ Հետո ծերունին իր թշվառ վիճակով այդ անարդար հարաբերությունների կենդանի վըկան ու զոհն է։ Նա զրկված է կյանքի բոլոր բարիքներից, նրա միակ հաճույքն այն է, որ իր աշխատանքով կարող է մի կտոր հաց հացնել իր որբ թոռներին։ Սևակը երգիծանքով է խոսում կառավարության բարեգործության մասին («նախ կըսպաննե, բայց կը թաղե ձրի»), մերկացնում բուրժուական «արդարության» և «լուսավորության» դասակարգային խմաստը (այդ դարձողը սովորեցնում է միայն «օրենքի առջև կոնակը ծռել»), ըստ էության հասնում է հակակրոնական, աթեիս-

տական հետևության («կրոնքը բառ մ'է, իսկ հոգի չի կա, ով դեռ կը հավատա, խենթ մ'է անիկա»)¹:

Սոցիալական անհաշտության շեշտերով է հնչում բանաստեղծի կոչը:

Ու սորվե ատե՛լ նողկանքով անհուն,
Անոնք, որ «փրկչի» կը կրեն անուն
Ու ճոխ խոսքերով տունը կը քանդեն.
Սորվեցուր տղոցդ ատել արդանդեն՝
Քաղաքագետնե՛րը բոլոր գույնի,
Որոնք կսպանե՛ն քեզ առանց թուլնի:
Սորվեցուր իրենց խոսքը հետագա՝
«Ալքատին համար բարեկամ չի՛ կա»:

Այս բանաստեղծության մեջ երեան է եկել Սևակի սոցիալական մտածողության մյուս բնորոշ կողմը. կյանքում գոյություն ունեցող հակասությունները նա երբեմն ըմբռնում է ոչ այնքան իբրև դասակարգերի կազմակերպված պայքար,

¹ Սևակի հակակրոնական հայտցքների ավելի տնօքով արտահայտությունն է «Յավո» անտիպ բանաստեղծությունը, ուր օգտագործված է առաջավոր արվեստի և գրականության մեջ շատ անգամ արծարծված մի նյութ՝ մահապատժի դատապարտված հեղափոխականի հրաժարվելը կրոնական խոստովանությունից: Դիմելով խաչով ներս մտած քահանային, բանաստեղծության հերոսը հպարտությամբ ասում է.

— Կը հեգնի՞ս, Տեր հայր, քու խաչդ անօգուտ
Ու հաշտությունդ կատակ մ'է անգութ.
Մի՛ խոսիր ինձի Աստղծույդ վլա
Որ դար դարերով անտարբեր վըկա՝
Երկնի կապույտեն կըժպտի անգութ...
... ինչո՞ւ արծաթի այս խաչը հիմար... (և այլն)
(ԳԱԹ, Ռ. Սևակի ֆոնդ):

այլ որպես մի համատարած գոյության կռիվ, որի ժամանակ «փոքրերն անըլրեալ մեծերուն կեր են» և այդ պատճառով էլ պետք է «ամենքն իրար հոգուտեն»։ Այդ իրողությունը դեմոկրատ բանաստեղծըն ընկալում է ողբերգորեն, որովհետև նա էլ իսահակյանի նման կարող էր ասել, որ ինքը չի ուզում «մտնել պայքար անարդար», չի ուզում «խլել բերնից արնոտ հացը աղքատի»։ Սևակն արտահայտում է աշխատավորական խավերի տենչանքը խաղաղ ու ներդաշնակ հասարակության մասին, երբ կիրագործվի «զրկված մարդկության երազը բարի», թեև հստակ պատկերացում չունի այդ երազին հասնելու ուղիների մասին։

Խոհերը ժամանակակից հասարակության վերաբերյալ Ռուբեն Սևակին հանգեցրին այդ հասարակության մեջ արվեստի և արվեստագետի դերի ու վիճակի բանաստեղծական զննումներին, ի՞նչ էր արվեստը առաջ և ի՞նչ է դարձել հիմա, ո՞ւր է զնում նա, ո՞ւն է նրա խսկական կոչումը, — այս հարցերը, որ զբաղեցրել են անցյալի շատ նշանավոր բանաստեղծների, հուզել են նաև Սևակին։ Այդ խոհերից է ծնվել «Թրուպատուրներ» հոյակապ բանաստեղծությունը, որ թերևս նրա պոեղիայի ամենաուժեղ և ներշնչված էջն է¹,

¹ Թանառտեղծությունը գրված է 1910 թ. օդուտուին, Լոգանում և առաջին անգամ տպադրվել է Թեոդիկի 1911 թ. «Ամենուն տարեցույցի» մեջ։

Բանաստեղծության նյութը, նրա հիմնական կերպարը մեզ կարծեք հեռացնում է արդիականությունից, տանում դեպի միջին դարերի բնորոշ պատկերացումները։ Տրուբադուրներ... Մշուշով պատաժ եվրոպական միջնադարի թափառիկ երգիչներ, որ շրջել են քաղաքից քաղաք, ամրոցից ամրոց և ամենուրեք հնչեցրել են իրենց ազատ երգը կյանքի, սիրո, հերոսության մասին։ Հին Պրովանսի այդ երգիչների խոսքին ունկնդրել են բոլորը, նրա մեջ տեսել իրենց ազրումների և իդեալների լավագույն արտահայտությունը։

Բայց Սևակի բանաստեղծությունը ոչ այնքան անցյալի մասին է, որքան ներկայի։ Դարեր են անցել, երբեմնի հպարտ երգիչների շառավիղներն այսօր էլ շրջում են երկրագնդի անծայր ճամփաներով, անցնում են մարդաշատ փողոցներով ու հրապարակներով։ Բայց նրանց շուրջն է՛ շի խմբում բազմահազար ամբոխը, առաջվա ակնածանքին ու ոգևորությանը փոխարինել է սառն անտարբերությունը կամ պարապ հետաքըրքը բարասիրությունը։ Անցնում են նրանք «խոիվ մազերով», «պատառոտուն» հագուստներով, դեմքերին մի «մութ ժպիտ», իսկ նրանց նահապետը անցորդներին լուռ կարկառում է իր գլխարկը...»

Հին տրուբադուրների վերջին շառավիղների երթը, որ ըստ երևույթին հաճախ է դիտել բանաստեղծը եվրոպական քաղաքներում, նրա համար լի է մեծ իմաստով։ Դա ամենից առաջ ազատ

Երգի ուժի և հարատեռության վկայություններից մեկն է, երգ, որ չեն կարող խլացնել ո՛չ նոր ժամանակների դաժան ոգին, ո՛չ բանաստեղծական բոլոր թոփշքները կաշկանդող դրամապաշտ կիրքը։

Մեքենայության այս դարը երկա'թ
Չընկճե'ց դեռ իրենց հոգին խանդակաթ.
Ու ոստաններու միջև դրամապաշտ՝
Թշվառության հետ գլուխ գլխի հաշտ
Կապրին նախնական կենցաղով ազատ,
Ազա՛տ Բնության որբե՛րն հարադատ,
Թրուպատուրները։

Արվեստը մեկն է այն ուժերից, որոնց շնորհիվ մարդը պահպանում է իր էության բանաստեղծական կողմերը, իր հոգու հպարտ թոփշքները, գեղեցիկ գալիքի հավերժական երազանքն ու ձգտումը։ Այդ պատճառով էլ Սևակի բանաստեղծության հերոսները, չնայած բախտի բոլոր հարվածներին, իրենց գործի վեհության և գեղեցկության գիտակցությամբ կարող են ասել.

Բայց ի՞նչ փույթ։ Մե՛նք ենք հոգիով հարուստ。
Մե՛րն է ներշնչումն որ կուգա վերուստ.
Մե՛րն է մարդը թաց, վերջալույսն անխո՛ս,
Փթիթը վարդին, առուն մշտահո՛ս.
Մե՛րն է մթին սյուրը գերեղմանին.
Հի՞ն աստվածներու ցեղին կը նմանին
Թրուպատուրները։

Մենք ենք որ անփույթ դրշով կը հեգնենք
Այս նենդ աշխարհին պսակները նենդ։

Քնար մը ձեսքներիս, անտո՞ւն, մահագի՞ն,
Չե՛նք ցանկար սարո՛ւկ—ողիտի դղյակին:
Աղատ բարբառի ասպետներ անա՞շ,
Կտորին մեռնելո՞վ, կ'մեռնին անմա՞ճ
Թրուզատուրները:

Ուուրեն Սևակը յուրովի հասնում է արվեստի
և պոեզիայի նկատմամբ ժամանակակից կապի-
տալիստական հաստրակովյան թշնամության
մտքին: Փողի և հարստացման անսանձ տենչը
սովանում է բանաստեղծական խոսքի անկախ դիր-
քըն ու նշանակությունը: Եվ ինչպիսի՞ հակադրու-
թյուն. մարդկային քաղաքակրթության վաղ այ-
շալույսին մի Հոմերոս, «որ աստվածներու ակեն-
կը խմեր», Գողթան երգիչներ ու տրութագուր-
ներ, որոնց շնորհիվ «կյանքն երգով կապրեր, կօ-
րորվեր», իսկ ժամանակակից աշխարհում՝ «այս
թշվառները», որոնց ուղեկցում են «ծիծաղն ամե-
նուն, լքումը ստոր, քաղցը տնանուն»: Եվ ողբեր-
գական տրամադրությամբ համակված բանաս-
տեղծը բացականչում է: «Վա՞խ, արծաթն Արվես-
տըն հանեց կախաղան»: Նա բոլոքի ձայն է բարձ-
րացնում բարոյական և զեղագիտական արժեքնե-
րի եղծման, ուկու ամենազոր բռնատիրության
դեմ.

Այս ի՞նչ դարերու հասեր ենք, Աստված,
Փշրեցի՞ն ինչ՝ որ կար վսեմ կերտված,
Թե դեռ սիրու ունիք՝ թաղելո՞ւ տարեք,
Ոսկիին նենդ ձա՛յնն է ամենուրեք:

Մի՛ միայն մհնք ևնք որ դեռ անարդել
Սիրե՛լ կ'երազնք. ո՞վ կուղի սիրե՛!
Թրութատուրները:

Բանաստեղծի իդեալը հենց այն հասարակությունն է, ուր այլևս չի հնչի ոսկու «նենգ ձայնը», երբ կյանքը կզարդանա պոետական սկզբունքներով՝ արդարության և գեղեցկության օրենքներով։ Ըստմանտեղ երազանք էր սա, որ փայփայում էր դեմոկրատ բանաստեղծը բուրժուական շահամության, պատերազմի և ազգային հալածանքների դաժան ժամանակներում։ այդ երազանքի մեջ արվեստը ներկայանում էր իբրև այն վճռական գործոններից մեկը, որոնց միջոցով պետք է լուծվեն հասարակական զարգացման ցավագին հարցերը։

«Թրութատուրները», հիրավի, գեղարվեստական տաղանդի վառ փայլատակումներից մեկն է և ցույց է տալիս Ռուբեն Սևակի ստեղծագործական խոշոր հնարավորությունները։ Մի հատուկ գեղեցկությամբ են հնչում բանաստեղծության տղերը, նրա վեցտողանի տները։ Իսկ բոլոր 17 տների վերջում կրկնվող միևնույն բառը՝ «Թրութատուրները» (տների վերջում նույն բառը կը ընելու հնարանքը, ի դեպ, շատ բնորոշ է Սևակի բանաստեղծական արվեստի համար) ասեք ստիպում է մեզ լսելու թափառիկ երգիշների տավիղներից արձակվող առնական հնչյունների մեղեդին։

Արվեստի կոչման և հասարակական նշանակության հարցերը շոշափված են նաև Սևակի մի քանի այլ բանաստեղծություններում։ Մարգարեի ավանդական թեմային է դիմում նա «Առքիա Մունի» բանաստեղծության մեջ, կերտելով ճշմարտության պատգամներ կարդալու համար մարդկանցից հալածված իմաստունի կերպարը։ Բանաստեղծի թեման արծարծում են և ցարդ անտիպ մնացած մի քանի գործեր։ Օրինակ, «Որո՞ւ համար» բանաստեղծության մեջ պոետը մերժում է իր քնարը հարստության կամ անձնական վայելքների ծառայեցնելու կոչերը և նվիրաբերում է այն «մեռնող Արվեստին ու մեռնող Ազգին»։ «Զոնս բանաստեղծությունը ցուցադրում է նյութապաշտության աղետալի հետևանքները, գեղագիտական բարձր պատկերացումների կործանումը։ Ահա մի հատված։

Անտառներու մեջ նայազները մեռան։
Ուիմպոսին վրա նյութն հիմնեց իր վրան,
իդեալին այլևս ո՛չ խունկ, ո՛չ խորան։

Ես, ուշ ծնած թըրուպատուր ոգածին
Փնտրեցի հետքը սերերու աստվածին,
Ամենուրեք «Հիմա՞ր, ի մա՞հ» պոռացին…

Ու բարձրացա զանգակատան մեջ հլու
Մեռնող վերջին արևուն դիմ երգելու,
Իմ վերջին երգս իդեալին ուղղելու…։

¹ ԳԱԹ, Ռ. Սևակի ֆոնդ,

Ուուբեն Սևակի պոեզիան, ամբողջությամբ վերցրած, իր ժամանակի հայ գրականության հետաքրքիր էջերից մեկն է։ Երբնք թերևս մեր ժողովրդի գրականության մեջ միաժամանակ չեն գործել այնքան շատ առաջնակարգ բանաստեղծներ, ինչպես 20-րդ դարի սկզբին։ Այդ ժամանակ են ստեղծագործել Թումանյանը, Իսահակյանը, Սիամանթոն, Վարուժանը, Մեծարենցը, Տերյանը, իր ուղին է սկսել Զարենցը, — բանաստեղծներ, որոնք իրենց ստեղծագործության մեծությամբ ու փայլով կարող էին զարդարել ուզածդ ժողովրդի գրականությունը։ Այս մեծատաղանդ բանաստեղծների հարևանությամբ Ուուբեն Սևակը համեմատաբար ավելի համեստ տեղ է գրավում մեր գրականության մեջ, բայց այդ տեղը կայուն է և ինքնատիպ։

Սևակի ստեղծագործությունն աշքի է ընկնում թեմատիկ, գաղափարական և ժանրային հետաքրքրությունների լայնությամբ։ Նրա գոշին ուներկապանակին հավասարապես մատչելի են ինչպես կյանքի ռեալիստական պատկերները, այնպես էլ բուռն զգացմունքների և ապագայի կոռահումների ոռմանտիկ մոտիվները։ Սևակը մեկն է այն բանաստեղծներից, որոնք իրենց խառնվածքով և՛ ռեալիստ են, և՛ ոռմանտիկ, սրանց էական գծերի բնական համադրման իմաստով։ Սակայն տաղանդի և գեղարվեստական որոնումների հիմնական ուղղությամբ Սևակն անկասկած հակված է

ղեպի իրականության ռեալիստական պատկերումը, թեև նա Հասցրեց իր ստեղծագործության մեջ ամբողջական և ավարտուն արտահայտություն տալու ռեալիզմի մեթոդին։ Այս առումով խիստ կարևոր է հետևյալ հատվածը 1908 թ. Սևակի գըրած մի նամակից, ուր համեմատելով իրեն ժամանակի մի արևմտահայ բանաստեղծի «օդային» ստեղծագործության հետ, նա ասում էր. «Ես ավելի իրապա՛շտ եմ, ամեն բանե առաջ իրականությունը զիս կը գրավե.— ամե՛ն իրականությունե վեր մե՛կ իրականություն կը ճանչնամ ես, ապրված, զգացված կյանքը, և ոչ թե երևակայված կյանքը»¹։ Կարելի է ասել, որ սա կյանքի ռեալիստական ընկալման և արտացոլման բավական հստակ արտահայտված մի ծրագիր է, որի իրագործմանն էր ծառայում Ռ. Սևակը իր ստեղծագործության հիմնական բովանդակությամբ։

Խորհելով Սևակի պոեզիայի մասին, չի կարելի շասել, որ խստապահանջ հայացքը այսօր ակնհայտ թերություններ կհայտնաբերի նրա մի շարք, նույնիսկ հաջողված գործերում։ Նրա բանաստեղծություններում և պոեմներում կարելի է գտնել լիովին չհղկված արտահայտություններ ու պատկերներ, որոշ գործերում նկատվում են ձըգձըգվածություն, անհարկի կրկնություններ։ Մասսամբ դրանք արդյունք են այն բանի, որ բանաս-

¹ ԳԱԹ, Ռ. Սևակի ֆոնդ։

տեղծը չի հասցրել մինչև վերջ հղկել իր գործերը՝
Երբեմն միապաղաղ են նրա կիրառած բանաստեղ-
ծական հնարանքները (օրինակ, հինգտողանի տու-
նը միևնույն տողով սկսելու և ավարտելու հնա-
րանքը, որ շափից շատ է գործածում Սևակը):
Բայց այդ թերությունները չեն կարող արժեքա-
զրկել մտորումների և պատկերների այն վառ ու
ինքնատիպ էջերը, որոնցով հարուստ է Ռուբեն
Սևակի բանաստեղծական ժառանգությունը:

6

Ռուբեն Սևակն օժտված էր արձակագրի ակնհայտ ձիրքով։ Նա բազմաթիվ փորձեր է կատարել նաև գեղարվեստական արձակի բնագավառում։ Դեռ 1907 թ. նա հրապարակել է «Տարի մը վերջ» պատմվածքը, որի բովանդակությունը քաղված էր եվրոպական երիտասարդության կյանքից¹։ Սակայն արձակագիր Սևակը հայտնի դարձավ հասարակությանը մի քանի տարի անց, երբ 1913—14 թթ. սլուսահայ մամուլում («Ազատամարտ») հրապարակեց իր բժշկական պատմվածքները՝ «Բժիշկին դիրքեն փրցված էջեր» ընդհանուր վերնագրով։ Այդ պատմվածքները նորություն էին մեր գրականության համար, դրանք առաջին անգամ բերեցին բժշկական-ուսուցողական մտքերը գեղարվեստական գրավիչ ձևով մատուցելու հնարանքը։ «Դրական նոր ճյուղ մը կ'ստեղծեք կոր, որուն վրա հիացողներեն մեկը ներեցե՛ք որ ես

¹ Ռ. Զիլինկիրյան. Տարի մը վերջ (սլատմվածք), «Արևովելյան մամուլ», 1907, № 26, էջ 640—643.

ըլլամ»,— գրում էր Ռ. Սևակին ժամանակակից-ներից մեկը¹:

Սևակ-արվեստագետն ու Սևակ-բժիշկը ոչ մի-այն հոգեբանական կոնֆլիկտի մեջ չէին գտնվում, այլև խորապես ներդաշնակում էին իրար: Իր աշխատանքի այդ երկու, արտաքուստ խիստ տարբեր բնագավառները Սևակը դիտում էր իբրև մեկ խնդիր և մեկ պարտականություն հասարակության հանդեպ, իբրև մարդուն ծառայելու, նրան հոգեպես և ֆիզիկապես գեղեցկացնելու մեծ նը-սլատակի արտահայտություն: Առա թե ինչու նրա լավագույն պատմվածքներում կա և՛ մասնագետ-բժշկի գործիմացություն, սրտացավություն մարդու նկատմամբ, և՛ արվեստագետի բարոյագեղագիտական հայացք:

Պատմվածքներում հստակորեն դրսևորվել է, հեղինակի այն համոզմունքը, որ բժիշկը միայն հիվանդի մարմնի հետ գործ չունի, այլև նրա հոգու: Նրա աշխատանքը միաժամանակ հոգեբանի աշխատանք է և այս իմաստով շատ մոտ է գրողի գործին, որը չէ՝ որ մարդկային հոգիներով է զբաղվում: «Վայ մարմինի բժիշկին, — կարդում ենք պատմվածքներից մեկում, — որ հոգին չի հասկնար: Ի՞նչ հոգեկան ցավեր կան որ հիվանդին ցավերը կբյուրապատկեն, կթունավորեն, մա-

¹ Երգիծաբան Հ. Ալփիարի նամակը Ռ. Սևակին (Թեոդիկ. Ամենուն տարեցույցը, 1915, էջ 325):

հացու կղարձնեն, այլև կբացատրեն այդ ցավերը» («Անիծված գանձը»): Ահա այստեղ է, որ Սևակի համար գալիս-միանում են գրողի և բժշկի խնդիրները. Հոգեբան գրողի հայացքն օգնում է ավելի խոր հասկանալու հիվանդի կացությունը, մարդկային ցավերի հոգեբանական նախադրյալներն ու հետևանքները, իսկ բժշկի մասնագիտական իմացությունը մղում է ավելի մեծ ուշադրություն նվիրելու հիվանդությամբ տառապողների դժբախտության պատկերման, գեղարվեստական խոսքի օգնությամբ մարդկանց ցավագին ախտերից հեռու պահելու խնդրին:

Մոտ երեսունի հասնող իր պատմվածքների նյութը, ամենայն հավանականությամբ, Սևակը մեծ մասամբ քաղել է սեփական բժշկական աշխատանքի փորձից, շարադրելով այն դեպքերն ու հանդիպումները, որոնք կարող էին հետաքրքիր և ուսանելի լինել նաև լայն ընթերցող շրջանների համար: Բայց դրանք երբեք չեն վերածվում սովորական թերթային հոդվածների, ոչ էլ հավաստի փաստերի ակնարկային վերարտադրության: Միշտ առկա է դեպքն ընդհանրացնելու և տիպականացնելու, կյանքի փաստը պատկերավոր մրտածողությամբ ներկայացնելու ձգտումը: Գրեթե բոլոր պատմվածքների մեջ հեղինակը հանդես է գալիս իբրև դեպքերի ականատես ու մասնակից, իբրև տեղի ունեցած ակտիվորեն դատող և գնահատող: Դա առավել ևս ընդգծում է շարադրանքի

գեղարվեստական որակը, քանի որ միշտ զգացվում է հեղինակի ներկայությունը, մարդկային տառապանքների հանդեպ նրա հոգատար ու թախծութայացքը։ Սևակը կարողացել է հասնել մի յուրօրինակ քնարական մթնոլորտի վերստեղծման, որն արդյունք է նախ և առաջ հեղինակի բանաստեղծական խոհերի և հուշերի։ Ահա, օրինակ, թե ինչպես է սկսվում «Մանչերուն գերեզմանը» պատմըվածքը։

«Հիմա որ ուսերուս վրա տակավին կղզամ տարիներուն ծանրությունը, ու ձեռքիս գրիշը՝ երբեմն փետուրի պես թեթև՝ այժմ մահվան բառերուն մնջ կկապվի ու կշփոթի, կհիշեմ հի՞ն հի՞ն օրերը, այն օրնյա՛լ օրերը, երբ ուղեղիս, ջիղերուս, մարմինիս բոլոր բջիջները այնպե՞ս լեցված էին կյանքով՝ որ մահվան գաղափարին համար տեղ չէր մնացած...։

Երջանի՛կ տարիք, ուր կյանքը կեռա, սիրու կզեղու, հոգին կպոռթկա»։

Լարված զգացմունքների լեզվով են հաճախ խոսում նաև պատմվածքների գործող անձինք։ Հիշենք, օրինակ, «Մեռելի մը նշամակը» պատմը. վածքի հերոսուհուն՝ կյանքի բուռն տենչանքով և մոտալուտ մահվան տագնապով լեցուն նրա մտորումները։

«Կուզեմ ապրի՛լ։ Կուզեմ ապրի՛լ՝ չնայելով որ կյանքը լիքն է հիասթափություններով ու դառնություններով։ Կուզեմ ապրի՛լ՝ չնայելով որ

ամեն քայլափոխիս կիղծիքն ու շարիքը, եսասի-
րությունն ու շահամոլությունը կցցվին դիմացս:
Կուզեմ ապրի՝ և կզգամ թե կմեռնիմ»։

Այն նյութը, որ սովորաբար ընտրում է Սևակն
իր պատմվածքներում,— հիվանդագին ախտեր,
մարմնական և հոգեկան անլուր տառապանք,
տանջակից մահ,— զրողին հեշտությամբ կարող
էր տանել դեղի մանրամասների նատուրալիստա-
կան նկարագրություն, որը հակագեղարվեստա-
կան, վանալ ու ճնշող տպավորություն կթողներ։
Չնայած մարմնական տանջանքների առանձին
մանրամասն, «բաց» նկարագրություններին, Սևա-
կի զիբքն իր ներքին բովանդակությամբ անպայ-
ման հեռու է այդ արատից։ Այն ի վերջո ոչ թե կե-
ղեքում է ընթերցողի հոգին, այլ լուսավորում։ Դա
«բուժիչ» գիրք է՝ ոչ միայն սլարունակած օգտա-
կար խորհուրդների, այլև ընդհանուր բարոյական
մթնոլորտի առումով։

«Բժիշկին գիրքին վրցված էջերը» գրված են
գործնական ու գեղագիտական հայեցակետերի
սերտ միաձուլման սկզբունքով։ Օգտակար խոր-
հուրդը, նախազգուշացումը արտահայտված ա-
ռանձին մարդկային ճակատագրի, բնավորության,
կենսական փաստի գեղարվեստական պատկեր-
ման միջոցով,— այս է այդ սկզբունքի էությունը։
Ընդհանուր առմամբ, Սևակի բժշկական պատմը-
վածքների նպատակն է կյանքից քաղած աղդեցիկ
օրինակներով մարդկանց զգուշացնել զանազան

Հիվանդություններից և ախտերից, ցույց տալ նը-
րանց աղետալի հետևանքները, եթե դրանք ժա-
մանակին չկանխվեն ու չբուժվեն։ Գրողն ուզում է
հավատ ներշնչել, որ կամքի, հետևողականու-
թյան, շրջահայաց մոտեցման դեպքում կարելի է
հաղթել ամեն մի հիվանդություն։ Շատ պատմը-
վածքների ոգու և տրամադրության համար բնո-
րոշ են, օրինակ, հետեւյալ խորհուրդները։

«Բժիշկնե՞ր, սորվեցուցեք ձեր հիվանդներուն,
որ քաջ ըլլան, ասլրիլը հաղթիլ է։ Հուսահատնե-
րուն հսմար այս կյանքին մեջ տեղ չկա...»

Վա՞յ հոգեկոր և մարմնավոր տկարներուն,
վա՞յ Լրկչոտներուն, վա՞յ հոռետեսներուն, վա՞յ
թերահավատներուն»¹։

«Զափավորություն, մաքրություն, աշխատու-
թյուն. ահա այն պարզ և հաստատուն եռոտանին
որուն վրա ամեն մարդ ամրորեն կրնա նստիլ», —
զրում է Սևակը մի ուրիշ պատմվածքում²։

Պատահական չէ, որ Սևակը մի քանի առան-
ձին գործեր է նվիրել հիվանդությունների դեմ
նշանավոր մարդկանց մաքառման պատմությանը,
ցույց տալով, թե ինչպես կամքի, արիության շը-
նորհիվ նրանք դիմացել են ամենածանր փորձու-
թյուններին։ Բազմաթիվ հիվանդություններով

¹ Ռ. Սևակ. Բժիշկին գիրքեն փրցված էջեր, Երուսաղեմ, 1943, էջ 29։

² Ռ. Սևակ. Բժիշկին գիրքեն փրցված էջեր և քերթված-
ներ, Փարիզ, 1946, էջ 137։

տառապող և սակայն մինչև խոր ծերություն ապրած, իր տիտանական գրական աշխատանքով հիացմունք և դարմանք պատճառող Վոլտերի պատմությունը («Ապրելու կամքը»), Նապոլեոնի կերպարը, որն «աշխարհին տիրապետելե ավելի իր անձին տիրապետեր էր» («Նաբոլեոնի մահը»), օգտագործված են ընթերցողին տոկունության և հավատի, ինքնատիրապետման և լավատեսության դասեր տալու համար։ Այդ շարքին է պատկանում նաև «Զմեռնելու համար» հիանալի ակնարկը, որը նվիրված է գրչակից ընկերոջ՝ Հայրենիքի բոցաշունչ երգիչ Սիամանթոյի դաժան հիվանդության և հերոսական մաքառման պատմությանը։ Կուրծքը բզկտող թոքախտի դեմ Սիամանթոն պայքարում և հաղթում է իր մեծ կամքով, ապրելու և հայրենիքին օգտակար լինելու անդըրդվելի գիտակցությամբ։ Եվ «բժշկական» ակնարկի էջերից հառնում է հայրենասեր բանաստեղծի կերպարը՝ վսեմ ու պայծառ, ներշնչող ու հրաբորքոք քնարով, դժբախտության հանդեպ շընկրկող, հըպարտ հոգով։

«Ո՛չ, հայրենիքի այսպիսի մեկ ճգնաժամային վայրկյանին, ան պիտի շմեռնե՞ր, ան պիտի շնուսահատեր, ան պիտի ապրեր, պիտի մռնչեր, պիտի երգեր, սրիտի բոցավառեր ռազմիկներու հոգին։ Հսկաներու ճակատամարտին մեջ ան իր գրչին ծանրությունը պիտի նետեր՝ արյունեն խենթացած սուսերի մը պես...»

«Զա՞րկ, Կովկաս...»

Այս տարորեն հիվանդը՝ իր հոգեարքի անկողնին մեջեն՝ ուժի ահագին գանձեր պիտի գտներ ամբողջ ցեղ մը գոտեպնդելու համար:

«Զա՞րկ, Կովկաս...»

Շնչառովթենե հեծող այս երիտասարդը՝ իր հիվանդ կուրծքեն ուզմաշղունց փոթորիկներ պիտի հառներ Ալպյաններու գագաթեն մինչև Արարատի ստորոտը...

«Զա՞րկ, Կովկաս...»¹

Բազմաթիվ պատմվածքներում Սևակը խոսում է, հատկապես, այսպես կոչված սոցիալական հիվանդությունների մասին (վեներական ախտեր, գինեմոլություն), դրանց մեջ տեսնելով ժամանակակից «քաղաքակրթության» դառը պտուղները: Ազդեցիկ, ողբերգական մանրամասներով է պատկերված այդ հիվանդությունների կործանիչ ազդեցությունը դրանց կրողների և հաջորդ սերունդների վրա («Կես խենթը», «Մի՛ շնար», «Մեղքին տունը», «Հարսներուն գաղտնիքը», «Տեր ողորմյա...», «Գինովին աղջիկը», «Տելիրում թրեմես» և այլն): Ամեն կերպ պատվար կանգնել, կանխել և հաղթել այդ հիվանդությունները,— այս է բժիշկ-արվեստագետի տիսուր պատմությունների նպատակը:

Սևակի բժշկական պատմվածքների հերոսները

¹ Ռ. Սևակ. Բժիշկին գիրքն փրցված էջեր և քերթվածներ, Փարիզ, 1946, էջ 121—122:

մեծ մասամբ հայեր են, Կովկասից կամ Անատոլիայից, որոնք իրենց հիվանդության բերումով կամ մի այլ պատճառով ընկել են Եվրոպա և այնտեղ հանդիպել հեղինակի հետ։ Անշուշտ, Սևակը կարող էր շատ ուսանելի դեպքեր պատմել նաև Եվրոպացի հիվանդների կյանքից։ Բայց նա հայ հերոսներ է ընտրում այն պատճառով, որովհետև դրանով սլատմվածքների նյութն ավելի մոտ կլիներ ազգային կյանքին։ Մյուս կողմից (և դա թերևս ավելի կարևոր էր Սևակի համար), հեղինակն աշխատում էր ցուցադրել Եվրոպական քաղաքակրթության կործանարար հետևանքները հարազատ ժողովրդի մարդկանց համար, մի միտք։ որը գրողին շատ է մտահոգել։

Քննարկվող շարքում կան մի քանի գործեր, որոնք ըստ էության հասցված են գեղարվեստական տիպականացման, և որոնց մեջ բժշկագիտական-խրատաբանական տարրը չի էլ զգացվում, քանի որ ձուլվում է կյանքի և բնավորությունների ճշմարտության խոր դզայնությունը։ Դրանք դարասկվուի արևմտահայ նորավեպի լավագույն էջերի թվին են պատկանում։

Ահա «Կոռունկը» պատմվածքը՝ հեռավոր Եվրոպական երկնքի տակ հոգին ավանդող հայ ուսանողի պատմությունը, որը մահից առաջ միայն մի բան է խնդրում՝ երգել պանդուխտ հոգիների սրտի թարգման «Կոռունկ»։ «Ու ես երգեցի իրեն. ո՞վ չի գիտեր կոռունկը, բոլոր աշերն ետին մնացած

ուղևորներուն կռունկը... ու անդին՝ բոլոր ճիտը ծուած, անվերջ ճամփաներուն սպասողներուն կը-ռունկը...։ Ու ինծի այնպես թվեցավ որ իր հոգին հովացավ, զովացավ, լացավ...։ Իր սրտին բոլոր լուրերը հանձներ էր հավատարիմ կռունկին...։ Անծանոթ երիտասարդի պատմությունը վերածվում է մի բնորոշ խորհրդանիշի, ընդլայնվում են պատմվածքի սահմանները մինչև հայժողովրդի անցյալի ու ներկայի տիսուր իրողությունները, որոնց քնարական գեղեցիկ բնութագիրն է տրված պատմվածքի եզրափակիչ տողերում. «Կոռ' ւնկ, կոռ' ւնկ, ամեն աշխարհի անկյուններե, ամեն սրտի խորշերե, քանի՛ ծանր լուրեր կապեցին ոտքերուդ, ու դո՛ւն կրնա՛ս թըռչիլ... Քանի՛-քանի՛ մահեր կապեցին քու թկերուդ, կոռ' ւնկ, թևավո՛ր հառաշ որ կրնա՛ս թըռչիլ...։» «Պանդխտության ճամփաներուն վրա անանուն մեռնողներու ամբո՛ղջ ցեղ մը՝ համայն աշխարհը թունավորելու շափ դառնություն դրեր էր այդ երգին մեջ, ու քարերը լացնելու շափ քաղցրություն...։»

Այսպես, իր արձակի լավագույն էջերում Սևակը դարձյալ մնում է բանաստեղծ՝ անմիջական, կրքոտ ու հուզական։

Մեալիստական ընդհանրացման ուժով են գրված նաև այլ պատմվածքներ։ Ահա «Ստամքսին զոհը». Հիշողության մեջ մնում է այդ պատմվածքի հերոսը, որը չնայած ստամքսի ծանր հի-

վանդությանը, մի «երդվյալ որկրամոլ» է և կյանքի մասին չի կարող դատել այլ կերպ, քան «խորոված հնդկահալի» և ուրիշ խորտիկների «տեսանկյունից»։ «Մեղքին տունը» պատմվածքում հուզիչ է, հատկապես, Եվրոպայում անբուժելի ախտով վարակված երիտասարդի հոր կերպարը, նրա դառնացած խոսքերը «քաղաքակրթության» հասցեին։ Հայրը և որդին փոխադարձաբար թաքցընում են իրարից անհուսալի իրողությունը, չուզելով վիշտ պատճառել իրարու։ Դա մի առանձին թախծոտ երանգ է տալիս պատմվածքին։

Խոր տպավորություն է թողնում «Ծարավմարդը», ուր պատմված է շատ հարուստ ծնողների միակ որդու՝ հիվանդության պատճառով գրեթե անընդհատ սովածության և ծարավության դատապարտված մարդու մասին։ Նրա ճակատագիրը առիթ է դառնում դատողություններ անելու սոցիալական անհավասարության, շարիքների վերաբերյալ։ «Իր հայրը ամբողջ կյանքով աշխատեր, աշքեն ու ճախեն փրցուցեր, աղքատներու ակռայեն և բանվորներու ձեռքեն խլեր էր, դիզեր ու դիզեր, որպեսզի օր մը իր տղան ու իր տղուն տղաքները առանց աշխատելու հաց ունենան տասը, հիսուն, հարյուր տարի...։ Եվ սակայն—դուք ի՞նչ կուզեք ըսեք, ես կը հավատամ գերագույն արդարության մը— իր տղուն տղաքները երբեք պիտի շծնեին ու իր տղան պիտի մեռներ

անոթի...: Իր ոսկիներու դեղին մեջ ան պիտի
մեռներ անսպաղ....»:

Առհասարակ, բժշկական զննումները Սևակին
հաճախ են հանգեցնում իր նախասիրած մտորում-
ներին՝ սոցիալական անհավասարության վերա-
բերյալ: «Անիծած գանձը» պատմվածքում ցույց
է տրված փողի, հարստության ագահ և անհագ
տենչանքի այլանդակ հետևանքները մարդկային
հարաբերությունների մեջ, նույնիսկ այն պահին,
երբ պատմվածքի հերոսները տառացիորեն կանգ-
նած են գերեզմանի եզրին: «Այդ ծերունին,—
մտորում է հեղինակը,— ի՞նչպես դիզեր էր այս
հսկա հարստությունը հոն՝ ուրկե երիտասարդ
բազուկներ մինչև Ամերիկաները կերկարին սև
հաց մը ուտելու համար: Այդ գանձին մեջ իրենց
անեծքը չէի՞ն նետած անո՞նք որ արյուն ու ար-
ցունք կուլային: Այդ ոսկի-զարդերուն լեռը, որով
ծերունին իր հիվանդ աղջիկը ծածկած էր՝ քանի՛
հարսերու գլուխեն, քանի՛ այրիներու ձեռքեն
խլված էր...»:

Սոցիալական շեշտերով են հագեցած նաև
«Մեղքին պտուղը», «Փոխան հարսանիքին» և այլ
գործեր: Սևակը ոչ միայն հանդես է գալիս ամուս-
նական ձևական արարողությունների դեմ, այլև
հստակորեն տեսնում է ժամանակակից հասարա-
կության մեջ ամուսնության և սիրո՛ առուծախի:
առարկա դառնալու հանգամանքը. «Այդ կանխալ
պատրաստած թուղթը՝ հարձակողական ու պաշտ-

ոլանողական հողի վրա գրված, երկուստեք ստո-
րագրված վաճառականական պայմանագրության
մը վերածեց մեր տարտամ սերերը, անշրջագիծ
անուրջները, ինքնահոժար նվիրումները, հավի-
տենի խոստումները...: Ու սերը, որուն համար
Սոլոմոն «Մահվան շափ դորավար է» կըսե, առե-
մարի մը շափ խախուտ եղավ...»¹:

Նշենք նաև, որ բժշկական պատմվածաշարի
որոշ գործեր փաստորեն հրապարակախոսական
բնույթի հոդվածներ են («Ապրիլը հաղթել է»,
«Վեցերորդ դգայարանք», «Հրաշալի բժշկու-
թյուն», «Այլասերում» և այլն), որոնց մեջ Սևակը
կրքոտ կերպով պրոպագանդում է բժշկական և
հասարակական որոշ գաղափարներ: Այդ հոդված-
ներում առավել որոշակիությամբ արտահայտվել
են հեղինակի պատկերացումները մարդու հոգե-
վոր և ֆիզիկական կատարելագործման ուղիների
մասին:

Սևակի պատմվածքների գրական արժանիք-
ներն ու գործնական օգտակարությունը նշվեցին
հենց սկզբից: Պահպանվել է ականավոր արձա-
կագիր և հասարակական գործիչ Ռուբեն Զար-
դարյանի նամակը բանաստեղծին: Վկայելով այն
«խանդավառ ընդունելությունը», որ գտել են այդ
պատմվածքները, Զարդարյանն այսպես էր բնու-
թագրում նրանց յուրահատկությունները. «Ասի-

¹ Ռ. Սևակ. Բժիշկին գիրքն փրցված էջեր, Երուսաղեմ,
1943, էջ 47:

կան նախ կ'ապացուցանե այն անտարակուսելի գրական ճարտարությունը որով կը գրեք ձեր հոդվածները, քերթվածի մը շափո թրթուն, երկրորդ՝ մանկավարժական այն մեթոտը որով հիվանդությանց սարսափն ու գարշանքը կը ներշընչեք, առանց խրատի ու քարոզության հին «պանալ» մեթոտին, և երրորդ՝ ա'յն որ, ափսո՞ս, ա'յնքան տառապանք կա մեր հասարակության ծոցն ալ, ու ա'յնքան հիվանդ, ա'յնքան վիրավոր»¹:

«Բժիշկին գիրքեն փրցված էջերը» հիմք են տալիս ասելու, որ հանձին Ռուբեն Սևակի հայ գրականությունը կորցրեց ոչ միայն տաղանդավոր բանաստեղծի, այլև մի բազմախոսական արձակագրի:

Ռուբեն Սևակի ինչպես շափածո, այնպես էլ արձակ ժառանգությունը կապվում է մեծ եղեռնին նախորդած տասնամյակի (1905—1915) արևմբութահայ գրականության զարգացման առավել առողջ միտումների հետ։ Դա մի տասնամյակ էր, երբ արևմտահայ կյանքի մեջ մտած սուր փոփոխությունները, դեպքերի զարգացման բուռն, դրամատիկ ընթացքը գրականությունից պահանջում էին ավելի զգայուն ու խոր արձագանքել ազգային դժբախտության և սոցիալական հակասությունների փաստերին։ Դա մի տասնամյակ

¹ Թեոդիկ. Ամենուն տարեցույցը, 1915 էջ 325։

էր, երբ բուն գրականության ներսում ավելի սրությամբ դրվեց տարբեր ուղիների հարցը. արդյոք արվեստի հիմնական նյութը դարձնել կյանքի ցալուտ խնդիրներից հեռու կանգնած անհատի ներաշխա՞րհը, թե՞ միրճվել հասարակական կյանքի մեջ, արծարծել ապադայի հույսերն ու նրանց իրագործման ուղիների հարցը։ Ծուբեն Սևակն անվերապահորեն ընտրեց երկրորդ ուղին, և դա ոչ միայն գեղարվեստական առողջ բնազդի արտահայտություն էր, այլև գրականության հասարակական կոչման հստակ և խոր ըմբռնման։ Այս առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում նրա գրական ժառանգության այն մի քանի էջերը, որոնց մեջ նա ուղղակիորեն խոսում է իր ժամանակի գրականության ուղիների և նպատակների մասին։ Դեռևս 1907 թվականին գրած մի նամակում նա արծարծում էր հայրենի գրականության մեջ մի նոր և առողջ շարժում մտցնելու միտքը.

«Պետք է զորավոր ցնցում մը առաջ բերել, նոր գրականություն մը, նոր արվեստ մը, նոր ոսկեղար մը ծնելու համար. պետք է նոր ուժեր հրապարակ նետվին, արվեստին սիրովը վառվա՛ծ, աշխատա՛ծ, զարգացա՛ծ. պետք է որ արվեստին անունովը հրապարակ նետված կեղծ ու պատիր զգացումները դադրեցվին իսպառ. պետք է որ արվեստին դրոշմը անկեղծությունը ըլլա միայն (գրել միա՛յն ինչ որ կ'զգա մարդ, և գրել ամե՛ն ինչ որ կ'զգա... առանց կեղծ ամոթխածու-

թյան քողին). պետք է որ իրենց ուժին գիտակցությունը ունեցող գրիչներ (նոր ու թարմ գրիչներ) սկսին վերածննդյան այս մեծ գործը։ Որովհետև՝ առանց այս վերածննդյան՝ մեր պոլսահայ գրականությունը է՛ և պիտի մնա «ճպուռի մը անիմաստ երգը»՝ քո երջանիկ բացատրությանդ համեմատ»¹։

Գրականության խնդիրներին Սևակն անդրադարձավ նաև «Բժիշկին գիրքեն փրցված էջերի» հոդվածներից մեկում («Այլասերում»)։ Մարդկանց մարմնական ախտերից հեռու պահելու հարցերը այստեղ բնական ճանապարհով կապվում են «Հոգու առողջության» խնդրի հետ։ Այդ խնդրում հիմնական դերերից մեկը պատկանում է գրականությանը. չէ՞ որ բժշկությունն ու գրականությունը, բանաստեղծի կարծիքով, ծառայում են նույն խնդրին՝ մարդու գեղեցկացմանը։ Սևակն անվերապահորեն դատապարտում է անկումային գրականության արատները՝ եսապաշտությունը, խրթնամոլությունը, հուսահատության և մարդատյացության քարոզը, ժողովրդի կյանքից ու տառապանքից կտրված գրական անպտուղ մարզանքները։ Կյանքի առողջ շիթերով հագեցած, կյանքի հետ քայլող և կյանքը լուսավորող գրականությունն է նրա իդեալը։ Բերենք մի քանի հատվածներ «Այլասերում» հոդվածից, որոնք ինք-

¹ ԳԱԹ, Ռ. Սևակի ֆոնդ.

Նին շատ պերճախոս կերպով ցույց են տալիս, թե ինչքա՞ն խոր ու ճիշտ էր հասկանում Սևակը գրողի և առհասարակ մտավորականության խընդիրները, ինչքա՞ն անհաշտ էր արևմուտքից եկող գրական այլանդակ բարքերի նկատմամբ.

«Զե՞ք տեսներ արդեն թե ի՞նչպես շատ մը գրագետներ լիրք քաջությունը ունին հայտարարելու, թե իրենք ժողովրդին համար չեն, որ կը գրեն:

Ո՛չ, հոտին ու հովհաններուն միջև անհասկացողությունը երբեք այսքան մեծ չէր եղած:

... Որբուկի պես անտեր ցեղ մը հուժկու, լուսեղ ու սիրտաբուխ բարբառի մըն է ծարավ։ Իսկ մեր գրագետները հանելուկային, առեղծվածային, խավարակուռ բաներ կ'ըսեն իրեն. ու մեր քերթողները՝ գրիչնին հայ արյան մեջ թաթախելեվերջ՝ շինարեն տողեր կը գրեն, որպեսզի մա՛րդ չհասկնա... Հեռո՛ւ մենե՛ ախտագին մտավորականներ... Մենք նոր միտքեր, նոր սիրտեր, նոր հոգիներ պիտի դարբնենք։

Մեզի կարմիր ու մսուտ շուրթերով, ուժեղ ու ժպտուն գրականություն մը պետք է։

Մեզի առողջ ու երիտասարդ մտավորականներ պետք են...

Մեզի նոր Ռոկեդար մը պետք է, նոր Ռոկեդա՛ր մը։

Այլասերում, ո՞չ, Վերածնունդ...»¹:

Սա Ռուբեն Սևակի գրական-հասարակական ծրագիրն էր, որին նա հավատարմորեն հետևեց իր կարճատև ստեղծագործական կյանքի ընթացքում։ Միաժամանակ, Սևակի այս ելույթները դարասկզբի հայ իրականության մեջ անկումային գրականության հակաժողովրդական, հակագեղարվեստական էության ամենասուր, սկզբունքային քննադատության էջերից մեկն են կազմում և այսօր էլ հնչում են խորապես իրավացի ու հրատապ։

¹ Ռ. Սևակ. Բժիշկին գիրքեն փրցված էջեր և քերթվածներ, Փարիզ, 1946, էջ 128—130։

7

1914 թվականի կեսերին վերադառնալով Կոստանդնուպոլիս, Սևակը մի քանի ամիս զուգահեռաբար զբաղվում է բժշկությամբ և գրական աշխատանքով։ Մոտ մեկ տասնամյակ օտարության մեջ գտնված բանաստեղծը փաստորեն նոր էր անձամբ ճանաչվում պոլսահայ լայն շրջանների կողմից։ Այդ օրերին նա բազմիցս ճառերով հանդես է գալիս հասարակական հավաքներում, ունկընդիրներին հիացնելով հոետորական վառ խոսքով, կրքոտովթյամբ ու փայլով։ «Ամենուն տարեցույցի» հրատարակիչ Թեոդիկը այդ օրերին գրել է, մատնանշելով Սևակի տաղանդաշատ խառնվածքի երեք կողմերը։ «Աթենաս՝ իմաստության շիթը դրած է անոր ուղեղին մեջ, էսկյուզապ՝ բժշկության խորհուրդը, Հերմես ալ՝ կայծը պերճախոսության»¹։

Շուտով բռնկեց համաշխարհային պատերազմը, և մի քանի ամիս անց, 1914 թ. աշնանը նըրան մասնակից դարձավ նաև սովորական

¹ «Եանթ», 1918 թ., № 2, էջ 15։

Թուրքիան։ Ռուբեն Սևակը կանչվեց բանակ և մի որոշ ժամանակ իբրև զինվորական բժիշկ ծառայում էր մայրաքաղաքից ոչ հեռու՝ Մաքրիգյուղում գտնվող բանակային զորամասում։ Բայց երբ վրա հասավ արևմտահայ մտավորականության «բարդուղիմեոսյան գիշերը»՝ 1915 թ. ապրիլի 11 (24)-ը, թուրքական ջարդարաները, իհարկե, շմոռացան նաև Ռուբեն Զիլինկիրյանին։ Նա ևս ձերբակալվեց։ Այնուհետև Սևակի ուղին համընկավ հարյուրավոր մահապարտների ուղուն. աքսոր Անատոլիայի խորքերը, տառապագին, սպասումներ և բարբարոս խոշտանգում։

Ռուբեն Սևակի կյանքի վերջին ամիսների և մահվան մասին կան ականատեսների հաղորդած ստույգ տեղեկություններ։ Կոմիտասի, Դանիել Վարուժանի և մի քանի տասնյակ ուրիշ հայ մտավորականների հետ նա էլ աքսորվում է Զանդր-րի գյուղաքաղաքը (Անկարայից մոտ 150 կմ հյուսիս-արևելք), ուր անորոշության մեջ մի քանի ամիս նրանք սպասում էին իրենց բախտի տնօրինմանը։

Պատմում են, որ Զանդրիում եղած ժամանակ տեղի ազդեցիկ թուրքերից մեկը տեղեկացնում է Սևակին՝ աքսորվածների մոտալուտ սպանության ծրագրի մասին և առաջարկում է նրան փրկվել՝ թուրքանալու և իր աղջկա հետ ամուսնանալու միջոցով (այդ աղջկան Սևակը բուժել էր ծանր հիվանդությունից)։ Հայրենասեր բանաս-

տեղծն անվերապահորեն մերժում է այդ առաջարկը, մինչև վերջ բաժանելով իր ընկերների ողբերգական ճակատագիրը:

Ռ. Սևակի փրկության մի ուրիշ «Հույս» էլ կար: Պոլսում մնացած նրա գերմանուհի կինն ու վերջինիս մայրը գերմանական դեսպանության միջոցով աշխատում էին բանաստեղծին աքսորից ազատելու համար: Նրանց ջանքերի շնորհիվ համապատասխան հեռագիր է ուղարկվում Զանդրի, որով թույլատրվում էր Սևակին մտցնել մայրաքաղաք վերադարձող հայ մտավորական ների ցուցակի մեջ: Այդ հեռագիրը Զանդրի հասավ մեկ օր հետո այն բանից, երբ արդեն... Բայց պատմենք ամեն ինչ հերթով:

1915 թ. ամառը Զանդրիում, ինչպես և Այաշում (ուր գտնվում էր աքսորվածների մի ավելի մեծ խումբ), սկսվեցին հայ գրողների և մտավորականների ծրագրված սպանությունները: Զանազան պատրվակներով նրանց խումբ-խումբ դուրս էին բերում բնակավայրերից ու վայրենաբար սպանում: Հերթը հասավ Դանիել Վարուժանին, Ռուբեն Սևակին և էլի երեք ընկերների, որոնց իրոր թե պետք է տեղափոխեին Այաշի ճամբարը: Բայց դա ստորաբար հորինված պատրվակ էր միայն:

Օգոստոսի 13 (26)-ի առավոտյան հինգ աքսորյալները կառքով ճանապարհ են ընկնում դեպի Այաշ: Նրանք հեռանում էին ողբերգական

կանխազգացմամբ, գրեթե անխուսափելի մահվան սպասումով. «Մնաք բարո՞վ, մնաք բարո՞վ... Մենք... մեռնելու կերթանք», — ասում էին նըրանք ընկերներից բաժանվելիս, — «իսկ մնացողները կարտասվեին», — հիշում են ականատեսները: Իրոք, մի քանի ժամ հետո վրա է հասնում արյունոտ վախճանը: Թյունա գյուղի մոտերքը զինված քրդերի մի խումբ (որին, ինչպես ապացուցված է, ոճիրի համար նախապատրաստել էր Զանդըրիի «երիտասարդ թուրքերի» կոմիտեն), կտրում է կառքերի ճանապարհը, վայր իջեցնում ուղևորներին ու մի ամայի ձորակում վայրենի դատաստան տեսնում: Վարուժանին, Սևակին և նրանց երեք ընկերներին նախ թալանեցին և, ըգգեստները անվնաս պահելու համար, մերկացրին... Դիմենք այդ ոճիրը հեռվից դիտած թուրք կառապանի վկայությանը. «Այս խեղճ զոհերը մեկիկ-մեկիկ ծառերուն կապվեցան: Իրենց ձեռքերը կապված ըլլալով՝ չէին կրնար ինքզինքնին պաշտպանել: Հետո շեթեապետը և իր մարդիկը իրենց դաշույնները մերկացուցին և սկսան դանդաղորեն և հանդարտ կերպով զանոնք մորթուել: Դատապարտյալներու աղաղակը և անոնդ հուսահատ կատաղությունը սիրտս կը ճմլեին»¹:

¹ «Հայկաշեն», Տարեգիրք արվեստներու, գրականությանց և գիտությանց, Կ. Պոլիս, 1922, էջ 321—322, Տե՛ս նաև՝ Գ. Պալաբյան, Հայ Գողգոթան, Ա. հատոր, Վիեննա, 1922, էջ 149—151:

Մի որոշ ժամանակ անց թուրքական կառավարությունը անամոթաբար տեղեկացրեց, թե դոկտոր Զիլինկիրյանը և նրա ուղեկիցները ենթարկվել են անհայտ ավաղակախմբի հարձակմանն ու սպանվել են:

...իրար դեմ առ դեմ կանգնած էին Պոեղիան և բարբարոսությունը: Մեկը միայն քանքար ուներ, որը կոչված էր լույսի և արդարության պատգամներ տարածելու, իսկ մյուսը զինված էր դաշույններով և ամեն մի գեղեցիկ բան ոչնչացնելու վայրաբարո մոլուցքով: Եվ Պոեղիան հոգտվում էր, կիսելով հարազատ ժողովրդի անլուր ողբերգությունը....

Զբարարակ էղանակ Մկրտիչի

ՌՈՒԹԵՆ ՍԵՎԱԿ

Խմբագիր՝ Օ. Պ. Համբարձումյան
Նկարիչ՝ Գ. Ա. Խուդիկյան
Տեխն. խմբագիր՝ Հ. Ա. Հովհասափյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ա. Ս. Սահակյան

Վֆ 10076

Պատվեր 1763

Տպաքանակ 3000

Հանձնված է արտադրության 1/X 1965 թ.:

Ստորագրված է տպագրության 10/XII 1965 թ.:

Թուղթ՝ $70 \times 90^1/32$; Տպագր. 6,75 մամ. + 2 ներդիր = 4,1
պայմ. մամուլ: Հաշվ.-հրատ. 2,9 մամուլ:
Գինը՝ 25 կոպ.:

ՀԱՍՐ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի
պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության
№ 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65:

